ՄԱՆԿԱՎԱՐԺ

№ 4 ԱՊՐԻԼ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 4

Աբգար Յովհաննիսեան *(պատկեր)*։
Իմ երգը — Մ. Փ.
Ո՞նց լռեմ *(ոտանաւոր)* — *Կապլօ*։
Կեանքի գարուն Ա.րշալոյսը — *(պատկեր)*։
Երկու ընկերներ — *Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեան*։
Շուտասելուկ-Բառաչաղ *(պատկեր)* — *Զարուհի*։
Մօրս աւէտիքը *(ոտանաւոր)* — *Ս. Յակոբեան*։
Սառաւի վարդապետանից — *Վարդան Վասիլեանց*։
Լուսաստեղիկ — *Ա. Եղիազար*։
Հայցաբոյսեր — *Կ. Կ. Մելիք-Շահ.*
Դասվանայ գգիրը *(ոտանաւոր)* — *Հասօ*։
Երեք մոգեր — *փոխ. Յով. Կարապետեան*։
Հրաբուղխ եւ երկրաշարժ — *Գ. Ղազարեան*։
Գարուն *(ժողովրդական երգ հոնսնևերով)* — *Կոմիտաս Վարդապետ*։

Ջ ւ ա ր ճ ա լ ի f:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ։

Քրիստոնէութիւնը Հայաստանում և Ս. Էջմիածին — *Յուսիկ Եպիսկոպոս*։

Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ժ

Ա.ԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ապրիլի 14-ին Բաթումում վախճանեց եւ 20-ին Թիֆլիսում Վանքի մայր տաճարի բակում, գեներալ Լօրիս-Մելիքեանի գերեզմանի կողքին մարմինը սեւ հողին յանձնեց ճշմարտասէր հայ գործիչ եւ հրապարակախօս *Ա.ԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՓՈՐՁ* ամսագրի եւ *ԱՐՁԱԳԱՆՔ* լրագրի հիմնադիրը եւ խմբագիր-հրատարակիչը։

Ա.ԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ վախճանեց 54 տարեկան հասակում։ Սրտի յայնացած լինելը ու երիկամուցիների անբուժելի հիւանդութիւնը տարան նրան գերեզման։

Ա.ԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ծառայել է ազգային, հասարակական եւ բարեգործական մեր բոլոր ընկերութիւնների մէջ։ Յուղարկաւորութիւնն ու թաղումը կատարեցին մեծ շուքով։

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար

№ 4

XXII ՏԱՐԻ Ա Պ Ր Ի Լ 1904 Թ

Տպարան «ՀԵՐՄԷՍ»
Тип. «ГЕРМЕСЪ» С. Назарьянца, Михайл. пр. № 81.
ԹԻՖԼԻՍ 1904

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Апрѣля 1904 г.



† Սբգաւր Յովհաննիսեան

ԻՄ ԵՐԳԸ

Ես երգեցի երգ
վշտալի
երգ տանջող
սրտերի.
երգիս ձայնի իմոր
արձագանք
էր իմ սրտի
հառաչանք.

Մ. Փ.



Ո՞Ն Ց ԼՌԵՄ

—

Ասում եմ լի՛ր. քայց ես ո՞նց լեմ,
Երբ չարութիւն է տիրել աշխարհին,
Արդարութիւնը տուած ոտնատակ
Դատապարտում եմ խեղճին, անձարին.
Ասում եմ լի՛ր. քայց ես ո՞նց լեմ,
Երբոր եղբայրս ցաւից վշտացած,
Ա՛խ, տատապում է յուր, տանջալիքի մէջ,
Թշուառին չը կայ մի սիրտ ողրմած:

Գաթլօ.

Bullfinch

Կեսգիշերի զարդուց Արշալոյսը

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ

(Նւէր դարոցական աշակերտներին)

Արամն ու Արշակը 9 տա-
րեկան երեխաներ էին և մի-
ևանց հարևան։ Արշակը հարուստ
վաճառականի որդի էր, հագնում
էր միշտ նոր և գեղեցիկ զգեստ-
ներ։ Արամը աղքատ մարդու որ-
դի էր և հագնում էր Արշակի
հները։ Արամի ծնողները Արշա-
կենց տանը ամեն ծառայութիւնները անում էին և
փոխարէնը ստանում կիսամաշ հագնելիքներ, աւե-
լացած կերակուրներ և երբեմն էլ մի քանի կոպէկ։
Արամն ու Արշակը միշտ իրար հետ էին խաղում և
սիրում էին միմեանց։ Բայց Արամը, որպէս աղքատ
մարդու որդի, շատ դէպքերում հրամանակատար էր,
քան հրամայող, աւելի հպատակ, քան հաւասար ըն-
կեր։ Օրինակ «ձի-ձի» խաղալիս, միշտ ձին լինում
էր Արամը. իսկ Արշակը չանէ սանձը բերանը գցած՝
վարում էր նրան որ կողմ որ ցանկանում էր։ Ձմեռ-
ները սահնակ խաղալիս՝ Արշակը աղայի պէս բազ-

մում էր սահնակի մէջ, իսկ Արամը, որպէս ձի, քաշում էր և փոխարէնը ստանում շաքարեղէններ, մրգեղէն և այլ անուշ ուտելիքներ:

Եկաւ սեպտեմբեր ամիսը: Արշակին ու Արամին տուին դպրոց: Երկուսն էլ ընդունուեցան Ա. դասատան Ա. բաժնում: Արամը, որպէս աղքատ մարդու որդի, ընդունուեց ձրիաթոշակների կարգում: Առաւօտեան կանուխ երկու ընկերները միասին գնում էին դպրոց և միասին վերադառնում տուն:

Շատ կարճ ժամանակից յետոյ դպրոցական կեանքը, պարապմունքները, ուսուցիչների պահանջները ձանձրացրին Արշակին: Սկսեց ծուլանալ, դասերը չը պատրաստել, շատ յաճախ բացակայ լինել դասերից: Եկած ժամանակն էլ անկանոն, տետրակները կեղտոտ, թարս ու չիտակ գրած, հարկաւոր դասական պիտոյքները տուն թողած: Ծուլութեան հետ միացրեց երեխայական չարութիւնները, որի համար ամեն օր ստացած խիստ նկատողութիւնները, յանդիմանութիւնները և պատիժները դառել էին Արշակի համար սովորական բաներ: Դասի ժամանակ նա չէր կարող հանգիստ նստել. մէկին պիտի աստղով ծակէր, միսի մազերը կամ ականջը յետևից ձգէր, երրորդի տետրակը պատռէր, թանաքը թափէր, սրա նրա հետ կռւէր և դասը խանգարէր:

Թւաբանութեան դաս է: Աշակերտները լսւած լսում են ուսուցչին: «4×4-ը աւելացնենք 2×2-ի վրայ եւ

ստացածը բաժանենք 5-ի վրայ, ի՞նչ կը ստանանք հանուղը» հարցնում է ուսուցիչը։

Բոլորը մատ են բարձրացրել, ամենքը ցանկանում են, որ ուսուցիչը իրան հարցնէ։ Բայց Արշակը բոլորովին անտարբեր, մի հատ անուշ չիր բերանը գցած, գլուխը կախած, սեղանի տակ ծածուկ էչ է նկարում Թւաբանութեան տետրակի վրայ։

Ուսուցիչը նկատեց նրա անտարբերութիւնը և հարցրեց.

«Դու, Արշակ, ի՞նչ բանի ես, կրկնիր, ի՞նչ եմ հարցրել»։

—Պ. Ուսուցիչ, էչ է նկարում,—պատասխանեց նրա մօտ նստող աշակերտը։

Ուսուցիչը կանգնեցրեց Արշակին անկիւնը, նկարած էչը ձեռքին բռնած և դասը շարունակեց։

Անցկացաւ մի քանի րոպէ, յանկարծ բոլոր աշակերտները միասին ծիծաղեցին։ Դասը խանգարուեցաւ։ Ուսուցիչը բարկացաւ և պատճառը հարցրեց։

—Պ. Ուսուցիչ, Արշակը կանգնած տեղը աչքերը չռում, լեզուն հանում, պռոշները ծռմռում, ծիծաղեցնում է մեզ,—պատասխանեց մի աշակերտ և հաստատեցին միւսները։ Ուրիշ հնար չը կար։ Ուսուցիչը նրան դասարանից դուրս արեց և դասը շարունակեց։

Անցաւ առաջին տարին։ Արամը գովասանական թերթով և ընծայով դասարանը փոխեց, իսկ Արշա-

կը մնաց միևնոյն դասարանում և վարքից ստացաւ 3.—

Բ. տարւայ սեպտեմբերին բացւեց դպրոցը։ Սկսեցին դասերը։ Արշակը և իրա սէնները դարձեալ նստած են միևնոյն դասարանում և կարծես չեն էլ հասկանում իրանց դրութիւնը։

Դասը սկսած է։ Բոլոր աշակերտները գրում են տետրակների վրայ ուսուցչի թելադրած նախադասութիւնները։ Լուութիւնը թագաւորում էր դասարանում։ Բոլորը խաղաղ և հանգիստ գրում են և աշխատում են, որքան կարելի է լաւ ըմբռնել ուսուցչի թելադրած բառերը և սխալներ չանել։ Այդ խաղաղ միջոցին յանկարծ մի աշակերտ աչքը բռնած՝ բղաւեց, «վա՜յ, վա՜յ ա՜յիս, ա՜յիս»...

Դասը խանգարւեցաւ. հարց ու փորձից հաստատւեցաւ, որ Արշակը գրպանը լցրած բաղդադի խուրմա (*արմաւ*) է ուտում և կորիզները սրա նրա երեսին շպրտում։

Այսպիսի և նման ծիծաղելի, ցաւալի և պախարակելի անկարգութիւնների համար Արշակը այնքան պատիժ ու յանդիմանութիւն էր տեսել, որ այլ ևս ոչ մի միջոց նրա վրայ ազդեցութիւն չէր անում։ Նա նկատողութիւններից չէր ամաչում, պատիժներից չէր վախում։

Անցաւ երկրորդ ուսումնական տարին։ Արշակը գլխաւոր առարկաներից վերաքննութիւն ունէր։

Հայրը ամսական 25 մանէթով առանձին ուսուցիչ վարձեց, ամառը Արշակի հետ պարապելու։

Սկսեցաւ Գ. տարւոյ ուսումը։ Արշակը վերաքննութիւն տւեց, բայց ոչ այնքան յաջող։ Այնուամենայնիւ գանազան դիջողութիւններ անելով և գանազան միջնորդների չնորհիւ Արշակին փոխեցին Ա. Դասատան Բ. Բաժինը։ Բայց չորս ամսից յետոյ, ուսուցիչները այլևս չը կարողանալով տանել Արշակի գանազան տեսակ անվայել ու կոպիտ վարմունքները, չը կարողանալով համբերել նրա վարակիչ չարութիւններին, ուսուցչական ժողովի վճռով արտաքսեցին գպրոցից, որ իր փչացած վարք ու բարքով չար օրինակ չը դառնայ միւսների համար։

Սրանից յետոյ Արշակին տւին ուրիշ գպրոց, բայց էլի անօգուտ անցաւ։ Առանձին ուսուցիչ վարձեցին, գուր անցաւ։ Արհեստի տւին, անընդունակ գտնւեցաւ։

Արշակը բթամիտ երեխայ չէր, ընդհակառակը շատ սրամիտ և չուտ ըմբռնող էր, բայց տրամադրութիւն, սէր, ձգտում չունէր աշխատելու։ Նա երես առած, ապիկ մեծացած երեխայ էր։ Սիրում էր ուտել, խմել, պարել, երգել, և առհասարակ զարճանալ։ Գրիչ, տետրակ, գիրք և առհասարակ դասական պիտոյքներ տեսնելիս նրա գլխի ցաւը բռնում էր։ Այսպէս անուսում, անկիրթ մեծացաւ Արշակը, դարձաւ պատանի և սկսեց իր հօր խանութում վաճառականութեամբ պարապել, բայց այդ

տեղ էլ երևեցաւ նրա անընդունակութիւնը, նրա անհամբերութիւնը, նրա վնասակար և անկանոն գործունէութիւնը:

Անցան տարիներ: Արշակի հօր վաճառականական գործերը ձախ գնացին, խոշոր անյաջողութիւններ առաջ եկան. անտնկացաւ. չարժական և անշարժ կայքերը պարտքի տեղ գրաւեցին և ամբողջ գերդաստանը ընկաւ վերջին աղքատութեան մէջ: Հայրը, այս ցաւերին չը դիմանալով, կաթւածահար եղաւ և յանկարծակի մեռաւ: Կարճ ժամանակից յետոյ մայրն էլ մահացաւ. քոյրերը մարդու էին գնացել: Իսկ Արշակը մնաց բոլորովին անտէր, որբ և սոված: Ո՞ւր գնա, ինչ անէ, ինչ միջոցով մի կտոր հաց ձեռք բերէ: Ոչ մի գործի մէջ ընդունակ չէ: Ոչ ոք նրան գործ չի տալիս:

Թող Արշակը մի քիչ ողբայ իր սև օրը, իսկ մենք խօսենք Արամի մասին: Տեսնենք, նա ինչ եղաւ:

*
* *

Արամը ամեն տարի ընծաներով և գովասանական թերթով փոխելով դասարանը, ամենայն աջողութեամբ աւարտեց քաղաքային դպրոցը և ուսուցչական խմբի յատուկ աշխատութեամբ ճարեցաւ մի բարերար, որի ծախքով Արամը աւարտեց և դիմնազիան, մտաւ համալսարան: Այստեղ աւարտելով բժիշկ, մտաւ ժողովրդի մէջ, ամուսնացաւ և սկսեց

երջանիկ ապրել և ապրեցնել իր ազգատ ծնողներին:

Մէկ օր բժիշկ Սրամը Ռուսաստանի յայտնի մայրաքաղաքում չքեղ տների մէջ իր առանձնատեղակում թէյ էր խմում. ներս մտաւ խոհարարը և յայտնեց, որ մի օտարական խնդրում է իրան ծառայ ընդունել: Թոյլատւութիւն ստանալուց յետոյ ներս մտաւ Արշակը, բայց չը ճանաչեց բժշկին և ոչ էլ բժիշկը նրան: Արշակը կեղծ անցաթղթով էր թափառում և ոչ մի տեղ իր մասին ճիշտ տեղեկութիւն չէր տալիս: Բժիշկը համաձայնեց Արշակին վերցնելու իրան սպասաւոր: Արշակը չատերի մօտ մտել էր ծառայութեան, բայց կարճ ժամանակից յետոյ մի քանի մանէթ առել և դուրս էր եկել: Նա չէր կարողանում հաշտւել իւր դառն վիճակի հետ, չէր կարողանում մի տեղ երկար մնալ, յաճախ փոխում էր տեղը, կարծելով թէ մի տեղ հանգստութիւն կամ ձրի հաց կը գտնի ուտելու:

Արշակը բժշկի տանը վեց ամիս ծառայելուց յետոյ հիւանդացաւ, և, չը նայելով բժշկի ամեն ջանքերին, երեք չաբաթ տառապելուց յետոյ, կնքեց իր մահկանացուն բժշկի գրկի մէջ: Նրա գրպանից դուրս եկած յիշատակարանից բժիշկը նոր ճանաչեց իր մանկական սիրելի ընկերին: Չատ ցաւեց, չատ արտասուք թափեց իր անբախտ ընկերի դիակի վրայ: Փառաւոր հանդիսով թաղել տւեց նրան և գերեզմանի վրայ արձանագրեց հետևեալը.

«Գարնան ցոռեն ով չի սերմանում.
«Աշնանը սոված դռներն է մնում,
«Մանուկն էլ, եթէ չի սիրում ուսում,
«Վերջն սեւ հացի կաոs է դառնում:

«Ուրեմն, խելօք, ուշիմ մանուկներ,
«Մի՛ cs սիրէք ուսում, պատե՛ֆ ձեր գրքեր,
«Որ ժամանակին բախտաւոր լինիք,
«Օsարի դուռը խաղցած չը մեռնիք:

Սարիբէգ Տէր-Միքիսեզեկեան



Հեգհամբոյր Մանուշակը *իր զամբիւղը լի հնգաթոյր*
ժանուշակով: **Զարուհի**

ՄՕՐՍ ԱՆԷԾՔԸ

—

Ոբ դեռ փոքրիկ մանուկ էի,
Կպած խաղից աչեն օր,
Շատ չարութիւն ես կանէի,
Նեղացնելով խեղճ իմ մօր։
Եւ չարացած մայրս ինձնից՝
Շատ ականջներ կը բափէր,
Մէկը միայն ականջներից
Իմ միտքս է մնացել.
Որ ասում էր միշտ. «Որդի,
Կեռած հացդ երկաթ լինի»։

*

Եւ այժմ, երբ ես մեծացած
Մուրճ եմ խփում դարբնոցում,
Ու երեկոներ յոգնած
Ծուռ եմ գալիս ես տրտում,
Երբ մուրճ խփելուց կոշտացած
Ձեռքերիս եմ ես նայում,
Աչեն անգամ ես չիշում եմ
Այն ականջը—եւ ասում եմ՝
—Այո, մայր իմ, կեռած մեր հաց
Կոշտ երկաթից է ձուլած...

Մ. Գակոբեան

ՍԱՍՏԻԻ ՎԱՐԴԱՍՏԱՆԻՑ.

(Վարսկ ակաց Հէֆիսաբ)

—

Պատմում են, որ մի թագաւոր իր զերիներից մէկի գլխատման համար աչքով արեց. խեղճը այդ յուսահատութեան րոպէին բերնին եկած հայհոյանքները ու լուտանքները տեղաց թագաւորի վրայ, որովհետև, ինչպէս ասում են, ով իր կեանքից ձեռք է վերցնում, ինչ սրտում կայ, այն էլ ասում է։

Երբ ձեռք չի քաշում թշնամիդ բեղնից, հատու սուսերդ հանիր պատեանից։

Թագաւորն հարցրեց, թէ ինչ է ասում։ Բարեմիտ վէզիրներից մէկը պատասխանեց. «Ծէր աբդալ, ասում է, թէ բարկանալդ եւ մի՛ մեղանչէլ. բարի առակէֆ ասիցեաց ձերոց»։ Թագաւորը խղճաց գերուն և հրամանն ետ առաւ։ Մի ուրիշ վէզիր, որ նրա հակապատակերն էր, ասաց. «Մեզ վայել չէ թագաւորի ներկայութեանը սուտ խօսել. այս անամօթը թագաւորին հայհոյեց ու անպատուեց»։

Թագաւորը բարկացաւ այս խօսքերի վրայ և ասաց. «Նրա սուտն ասելի հաճելի էր, քան թէ քո ճիշտը. որովհետև նրա պիտաւորութիւնը բարի էր, իսկ քոնը՝ չար»։

Իմաստունների խօսք է, թէ բարեբար սուտն ասելի լաւ է, քան խռովայոյզ ճիշտը։

Երբ թագաւորն ասածներդ անում է։

Վա՜յ քեզ, եթէ ասածդ մի վատ բան է.

Ջրիտուն թագաւորի պալատի ճակտին գրւած է.

Աշխարհիս, ե՛ղբայր, ոչ ոհի չի մնայ,
Դիր յոյսդ միայն Առարչի վրայ.
Մի՛ յենիր մէջդ աշխարհի վրայ,
Ոչ ոք աշխարհում անմահ չի մնայ.
Երբ անբիծ հոգին մարմնից հեռանայ,
Թէ՛ գետնին մնում թէ՛ գանի վրայ։

Թարգմ. պաթկերէնից. Վարդան Վասիլեանց

ԼՈՒՍԱՏՏՆԻԿ

Ճապոնական ժողովրդական հեքիաթ

Հին ժամանակներում ապրում էր սրբապան լոտոս ծաղկի պսակի մէջ մի փոքրիկ լուսատտնիկ. իսկ լոտոսը աճում էր մի փոքրիկ, դեղեցիկ լճակի վրայ, և նրա բիւրեղեայ մակերևոյթը սիրով ցոլացնում էր լոտոսի ահագին տերևները և հրաշալի ծաղիկները, որոնցով նա լի էր, իսկ լուսատտնիկը վիշերներով փայլում էր լոտոսի վրայ, իբրև մի փոքրիկ լուսաւոր, աղամանդեայ աստղ, և ծաղիկը, կարծես, թանկագին թագի էր նմանում։

Ճապոնացիներից շատերը գալիս էին այստեղ այդ տեսարանով զմայլելու, շատ հեռու տեղերում խօսում էին դիւթական, դեղեցիկ լճակի մասին։ Ճպուռներ, բզէզներ, գարմանալի մեծութեան և գոյների թիթեռնիկներ թռչկոտում էին հանդիստ, վեմ լոտոսների վրայ, մի ծաղիկից միւսը անցնելով։ Նրանք սկզբում զարմանում էին այդ գրեթէ աննշմարելի լուսատտնիկի վերայ, որ այնքան փոքր էր և արտաքուստ ցերեկով էլ ոչ դեղեցիկ։ Չէին կարողանում հասկանալ, թէ որտեղից է երևան գալիս նրա կրակը։ Մոռացել էին, որ ամենից հզօր աստուածներն էին վառել այդ կրակը՝ այդպիսի տեսքով աննկատելի փոքրիկ որդի մէջ։ Եւ նրանք սկսեցին խնդրել լուսատտնիկին իրանց թագուհուը դառնալ։ Թիթեռնիկներ, ճանճեր, մոծակներ, ճպուռներ, գրեթէ, բոլորը շրջապատել էին լոտոսի գալուկ վարդագոյն, քնքոյշ տերևները։

— Ոչ,— ասաց լուսատտնիկը, անդօր եմ ես այդ պատասխանատութիւնը ինձ վրա վերցնելու։ Ինձ համար այն էլ ծանր

է, որ դուք ամենքդ ժողովել էք իմ շուրջը և հանդիսաս խանգարում էք... Ինձ համար արդէն այն էլ լաւ է և բաւական, որ կարող եմ փոքը ինչ լոյս տալ և լուսաւորել այդ հրաշալի բարի լոտոսին, որ ինձ ապաստան է տւել և չի քշում իրենից...

Այն ժամանակ բոլոր այդ բզէզները, ճանճերը, մոծակները և թիթեռնիկները նեղացան լուսատունիկի վրայ և թռան նրանից հեռու...

—Անպիտան որդուկ,—ամեն տեղ դանդատւում էին նրբանք,—մենք նրան այդպիսի մեծ պատիւ արինք, իսկ նա զրկեց քշից մեզ: Եւ թող նստի իր լոտոսի վրայ,—ոչինչ լաւ բան չը կայ այնտեղ և ոչ էլ իրեն՝ որդուկի մէջ:

Իսկ լուսատունիկը ապրում էր միայնակ և խիստ գոհ էր իր ճակատագրից: Եւ առաջւայ նման ճապոնացիք գալիս էին այստեղ, այդ լուռ և անդորը լճակի մօտ և գմայլւում էին բնած լոտոսների վրայ, որոնք լուսատունիկի քնքոյշ, խորհրդաւոր լուսով էին լուսաւորւած...

Եւ ահա այն ժամանակ միջատները վճռեցին նոյնպէս լուսատունիկներ դառնալ և սրբազան լոտոսները լուսաւորել... Նրանք արդէն վաղուց տեսել էին ափի վրայ և Ֆուկի-Շիմո լեռան տակ ճապոնացիների լաւ, զեղեցիկ տնակները՝ փայլուն կերպով լուսաւորւած պատուհաններով:

Եւ վճռեցին, որ լուսատունիկը այնտեղ էր ձեռք բերել իր կրակը, իր երկնային կայծը...

Եւ խուռներամ թռան ղէպի լուսաւորւած տնակները, ամպի պէս պատեցին ճապոնական գոյնզգոյն փոքրիկ լապտերները, ապահովեցրին թափւեցին ճրագների վրայ և... մեռած՝ անձրևի պէս ընկնում էին շարունակ՝ բոցից այրւած...

Մինչև այժմ էլ երեկոներին ճապոնացիք տեսնում են նոյնանման թիթեռնիկները, բզէզները, մոծակները և ճպուռները, որոնք կուրօրէն սլանում են կրակի վրայ, և կորչում են ու կորչում, մոռանալով, որ աստւածները իւրաքանչիւրին որոշել են իրենց վիճակը և իւրաքանչիւրին իրենց երջանկութիւնը շնորհել:

Թարգմ. Ա. Եդիկար

XXIX

ՀԱՅԱԲՈՅՍԵՐ

—

Աննիկի այդին հարուստային չքեղ ծաղիկներով վառվռում էր ու անուշ բուրմունք արձակում։ Ոչ միայն Աննիկը, այլ և անեցիք բոլորը իրենց ազատ ժամանակը այնտեղ էին անցկացնում։ Աննիկը գրեթե ամբողջ օրը զբաղած էր, նա այժմ շատ բույսեր էր ճանաչում, գիտեր նրանց կեանքը, ամեն մէկի առանձնայատկութիւնը և թէ ինչպէս պէտք է խնամել նրանց։ Նա Յովակիմին այդու բոլոր աշխատութիւնների ժամանակ օգնում էր և իրեն տւած «ihrնատու պարտիզպանուհի» անունով պարծենում։

Մինչդեռ աննկատելի կերպով ժամենում էր աշունը՝ խաղողի մեծ ճիերով ու տանձ ու խնձորի կոյտերով։

Թէև խաղողը դեռ բոլորովին չէր հասունացել և այգեկութիւն դեռ քանի շաբաթ կար, բայց Յովհաննէսը գրան չէր նայում, քաղում էր խակ խակ և բերանը ճխտում, նրա թթու համը բանի տեղ չը դնելով։

Նոյա երեսի ու ձեռների չանկատ ածիլից երևում էր, որ

Նա ուրիշի այդիներ էլ է մտնում ու այգեպաններին ձեռքից փախչելիս՝ վարսիկն ու բաճկոնն էլ պատռտում։

Բայց Յովհաննէսը այդպիսի դատարկ բաներին առաջ կանգ չէր առնում, միւս օրը ուրիշ այգիներ էր ընտրում։ Ջը նայելով որ պապն էլ պատժում էր, բայց ոչինչ, ուշ չէր դարձնում։ Անդիկը երբ Յովակիմին հարցնում էր նրա մասին, ծերունին գլուխն էր թափահարում։

Վերջապէս մօտեցաւ պատուհները քաղելու ժամանակը. սեպանի վրայ արդէն դեղձ, ծիրան ու թուզ էր դալիս։

Մի անգամ Անդիկի հայրը ճաշի վրայ ասաց, վաղը պէտք է շուտ զարթնենք, մօտակայ թուրքերի դիւղը դնանք մշակներ վարձելու, չուտով այգեկութը կը սկսւի, թուրքերը իրենք այդիներ չունեն, դրա համար էլ սիրով են գալիս մշակութեան։

«Հայրիկ, ինձ էլ հետդ տար», խնդրեց Անդիկը։

—Լաւ, միմիայն կը յոգնես դու, ես ուտով պիտի դնամ, բայի այդ, պէտք է վաղ զարթնել։

«Դրանով չես վախեցնիլ, ասաց կինը ժպտալով, նա, հաւատացած եմ, քեղանից վաղ պիտի զարթնի, չէ որ արևածագին է դուրս գալիս թռչուններին արթնացնելու։

Անդիկը ուրախ նայում էր հօրը, նրա սև աչքերը ասում էին. չէ, քնով չեմ անցնիլ։

Միւս օրը հազիւ թէ արևը անտառի ետևից շողքը ձգեց Անդիկի պատուհանին, իսկոյն վեր կացաւ, լուացուեց, հագնուեց, աղօթք արաւ և դնաց հօրը արթնացնելու։

Բարսեղը մտադիր էր շուռ գալ միւս կողքի վրայ, երբ սուսիկ ննջարանի դուռը բաց արաւ Անդիկը և ոտի ծայրերին մօտեցաւ մահճակալին. «Դէ, ասա, հայրիկ, ո՞վ է մեզանից քնով անցել, ո՞վ»։

—Ի՞նչ է պատահել, քնաթաթախ հարցրեց Բարսեղը։

«Անդիկը կարելի է քնով կանցնի, վեր կաց, հայրիկ, նրան զարթեցրու, կանչում էր բարձրաձայն չարաճճին։ Բարսեղը աչքերը բացաւ և դասեր վարդագոյն դէմքը տեսնելով—սիրով քաշեց իրեն մօտ։

«Ա՛խ, դու, իմ անքուն թռչնակս, լաւ է որ ինձ զարթեցրիր, թէ չէ քնելու էի, և յետոյ ուշ կը լինէր ու չոր. այժմ

առաւօտեան հովին լաւ կը գնանք։ Գնա կարգադրիր, որ թէյ տան, կէս ժամից ես պատրաստ կը լինեմ։

Աննիկը իսկոյն կարգադրեց և ուղիղ կէս ժամից հօրը հետ տան դարբասից դուրս եկաւ։ Ձանապարհը կարճացնելու համար նրանք արտերի միջով գնացին։

Ոսկեզօծ արտերի ալեծածան հասկերի ծովի մէջ նրանք կորչում էին, առաւօտեան ցօղը դեռ ճկուն ցօղունների վրայ փայլփլում էր, թաց խոտը փռւում, խճճւում էր նրանց ոտներին, իսկ արևի չեղ ճառագայթները ցոլցլում էին լի հասկերի վրայ։ Աննիկը ականջ էր դնում, թէ լորերը՝ արտի մի ծայրից մինչև միւս ծայրը ինչպէս էին մէկ մէկու կանչում և թէ ինչպէս բարձր, կապուտ երկնքում բազէները ճախրում էին, իրենց սուր աչքերը որսի վրայ դարձրած։

Արտերը անվերջ ձգւում էին մէկը միւսի երեսից, ցորենից յետոյ գալիս էր եգիպտացորենը, եգիպտացորենից յետոյ՝ կորեկն ու գարին և այսպէս միւսները։

Աննիկին շատ դուր եկաւ այդ զբօսանքը. նա երբեմն վազվզում էր առաջ՝ դաշտի խաշխաշը, պուտը և ուրիշ ծաղիկներ քաղելու, երբեմն յետ էր մնում, գլուխը թեքում դէպի երկինքը, որտեղից արտուտների արծաթահնչիւն դայլայլիկն էր լսւում։

—Հայրիկ, թող հասկերից մի մեծ փունջ կապեմ Հեղինէի համար, ասաց աղջիկը։

«Ո՛չ, սիրելիս, ի դուր տեղը հասկեր քաղելը մեղք է։

—Ինչո՞ւ։

«Որովհետև հասկը հաց է»։

—Հասկը ինչպէս թէ հաց է, զարմացած բացականչեց Աննիկը։

«Ի՛ հարկէ պատրաստի հաց չէ, որ իսկոյն ուտւի, բայց չէ՞ որ դրա հատիկները աղում են, ալիւր չինում, իսկ ալիւրից թխում են հացը։

Աննիկը առ ժամանակ լուռ գնում էր, յետոյ հարցրեց. Հայրիկ, ինչու մի հաց սև է, միւսը ճերմակ։

«Նրա համար, որ սև հացը պատրաստում են աճարից, իսկ ճերմակը՝ ցորենից։ Այդ երկուսն էլ, ցորենը թէ աճարը, ինչ-

պէս և եգիպտացորենը (ամիւղր), բրինձը, կոբեկը, դարին ու վարսակը պատկանում են հացաբոյսերի ընտանիքին։

Հացաբոյսերի ցօղունը ինչպէս ծղիօտի է նմանւում, ասաց Աննիկը։

«Հէնց նոյն ինքը ծղնօտն է, միայն քանի որ նրա վրայ աճում է հասկը, նա ցօղուն է, հունձից յետոյ, երբ թափում են կամ կալսում, ստացւում է ծղնօտը, որը բանեցնում են տըրնային զանազան պիտոյքների համար. օրինակ նրանով ծածկում են խրճիթների կտուրը, փռում են անասունների ոտի տակը, մանրածը՝ որ յարդ է ասւում, ուտացնում են կենդանիներին և մինչև անգամ սովի ժամանակ խառնում ալրին։ Ճիշդ է այդպիսի հացը անդարար ու համեղ չէ, բայց ինչ կարող ես անել, քաղցից միայն այդ չէ, որ ուտում են. աւելացրեց հայրը։

—Ես կարծում էի, ծղնօտը առանձին է բանում, ասաց Աննիկը։

«Միայն դու չես, որ այդպէս ես մտածում, ծիծաղեց հայրը։

—Ծղնօտի մէջը դատարկ է, նկատեց աղջիկը մի ծղնօտ միջից կտրելով, տեղ տեղ ուռած կապերով։

«Այո, դատարկ է, բայց դու տեսնում ես, որ կապերը դատարկ չեն, պինդ են։

Ահա այդ կապերից են գուրս գալիս տերևները և նրանց մէջն է, որ հացաբոյսերը ժողովում են իրենց բոլոր պաշարը և դրանց շնորհիւն է, որ նրանք կարող են աճել ու լցւել։ Բացի այդ, կապերը ծղնօտին որոշ ամրութիւն են տալիս, քամուն և վատ եղանակներին դիմանալու։

—Աւա՛, հայրիկ, կեն մարդիկ, որ հաց չեն ուտում։

«Ի հարկէ կան, աղջիկս, ցորենը միայն բարեխառն կլիմայում է աճում, իսկ տաք տեղերում դրան փոխարինում է բրինձն ու արմաւենու մի տեսակը։

Հացաբոյսերի իւրաքանչիւր տեսակը իրեն սիրած երկիրն ունի, այն տեղերը, ուր չատ տաք է և ձիւն չէ լինում, բրինձն է բանում, որտեղ քիչ է ձիւն գալիս, ցանում են եգիպտացորեն, որտեղ ձմեռը սաստիկ է, այնտեղ ցորենը փչանում է,

դրա փոխարէն ցանում են ճաար, վարսակ ու գարի, որոնք սառնամանիքին դիմանում են։ Մեզանում, Կովկասում, ամեն տեղ, քիչ բացառութեամբ, բանում են գրեթէ բոլոր հացաբոյսերը»։

Առանց ցորենի,—չարունակեց հայրը, ռուս գիւղացին չէ կարող ապրել, ցորենը նրա համար ամեն բան է, թէ կերակուր և թէ հարստութիւն։ Մեզանում, Կովկասում, Խրիմում կամ Փոքր-Ռուսիայում, որտեղ հողը մեծ մասամբ սեւահող է ու պարարտ, երկրագործի համար մեծ բաղդ է, իսկ հիւսիսում, կամ լեռնային կողմերում, ուր հողը կաւային է կամ քրիճոտ, որոնց վրայ դժւարութեամբ են աճում ցորենն ու գարին, այնտեղ գիւղացու համար մի տանջանք է։

Գիւղացին շատ դժւարութեամբ է ապրում այդպիսի տեղերում։ Հերկում է նա ինչ տանջանքներով իր կաւային հողը, ցանում, տափանում, ահա, տեսնում ես, ցրտերը սկսեցին և ցանքը փչացաւ։

Բացի սառնամանիքն ու քամիները, հացաբոյսերը այնքան թշնամիներ ունեն, որ չես էլ կարող համարել։ Ահա հէնց քո սիրած տերեփուկը (василекъ) նրանց փչացնում է։ Տերեփուկը ապրում է հացաբոյսերի հաշւին, նա հողից ծծում է բոլոր հիւթը, որոնք հացաբոյսերին պէտք էին։ Բացի այդ, կածուկը, դեղնածաղիկը, մի քանի վնասակար խոտեր ու ժանգոտները խեղդում են արտը՝ դեռ չը բարձրացած։

Հացաբոյսերը դրանցից աւելի վատթար թշնամիներ էլ ունեն միջատների ու կաթնակերների մէջ. դաշտային մկները, նապաստակները և միւս կենդանիները կրծում են հատիկները, փորփորում ցօղունը։

Թարնանը արտերի վրայ թափւում են զանազան ճանճեր, բզեզներ, նրանց վրայ դնում են իրենց ձւանները, իսկ դրանցից դուրս եկած թրթուրները կամ որդները խժռում են ցանքը։

Տաք երկրներում, ինչպէս և մեր Կովկասում, հացաբոյսերի ամենակատաղի թշնամին մորեխն է։ Նա այնպիսի առատութեամբ է թռչում, որ ամպի պէս բոլորովին ծածկում է արեւի ըոյսը։

Մի ակնթարթում մորեխի այդ ամպը իջնում է դետնին,

հասա չերտով ծածկում դաշտի երեսը, ջուրը, ծառերը, որոնց ճղները նրանց ծանրութեան տակ վշրտւում են, և մի ժամում ծաղկած դաշտերը, այգիներն ու պարտէզները անապատ դարձնում. ամեն ինչ ուտում, կրծում են դրանք։

Դրանով դեռ չէ վերջանում ցաւը. մարեխը այդ նոյն ժամանակ հողի մէջ դնում է իր ձւաններըը, որոնցից դուրս են գալիս թրթուրները, որոնք պակաս ադահ չեն և յետ չեն մնում ջնաս տալու կոշտից չափահասներից»...

— Մի՞թէ դրանցից ազատուելու միջոց չը կայ, հարցրեց Աննիկը։

«Համարեա թէ չը կայ. միայն դրանք վախենում են կրակից ու ազմուկից և, երբ մարդիկ իրեն ժամանակին նկատում են նրանց այդ սարսափելի արշաւանքը, բոլոր գիւղացիք վազում են դաշտը, կանայք, երեխայք պղինձներով ու թիթեղեայ ամաններով աշխատում են որչափ հնար է մեծ ազմուկ հանել, իսկ տղամարդիկ՝ չուռով կրակ վառել։ Եթէ այդ յաջողւում է կատարել առաջ քան թէ մարեխի նստելը, այն ժամանակ նա վախենում, հեռու է թռչում։

Ա՛հա, սիրելիս, թէ ինչպիսի ուժերի դէմ պիտի կռւի երկրագործ չինականը մի կտոր հացի համար. նրա վիճակը այնպէս նախանձելի չէ, ինչպէս արևադարձային երկրի բնակիչներինը, որոնք ոչ վարում են, ոչ հնձում, այլ ամեն բան պատրաստ է։ Նրանք ամբողջ օրը ոչինչ չեն անում, պառկում են իրենց բամբուկից (համակ) շինած խրճիթների առաջ կամ պատրաստ թիւնից մինչեանց հետ կռւի դուրս գալիս։

— Բայց նրանք ո՞րտեղից են հաց ստանում, հարցրեց Աննիկը։

«Թէ բամբուկի ծառերը և թէ կոկոսի ընկուզները ընտիր ու սննդարար կերակուր են տալիս վայրենիներին, պատասխանեց հայրը։ Հացը՝ հացի ծառից են ստանում, որի մասին մեծ պատմը երբեմն կը պատմեմ քեզ, կոկոսի ծառից ստանում են կաթ, չաքար, գինի, ընկոյզ և չինութեան նիւթեր։

Եւ այդ ամեն հարստութիւնը ստանալու համար ոչ մի աշխատութիւն պէտք չէ, մեկնիր ձեռդ և վերցրու։

Տասը արմաւենին, որոնց համար ոչ մի խնամք չը կայ, տալիս են իրենց տիրոջը այնքան, որքան մեղանում մի մեծ արտ, որը արուն քրտինքով է մշակւում։

—Ա՛խ, հայրիկ, արմաւը հացից այնքան քաղցր է, որ ես ամենայն ուրախութեամբ այդ մեծ արտը մի արմաւենու հետ կը փոխէի...

«Բայց և այնպէս քո սովորական հացին սիրտդ կը քաշէր։ Ամեն մէկը սիրում է այն բանը, որին մանկութիւնից վարժւել է, նկատեց հայրը։

—Չը կամ—երկարացրեց Աննիկը։ Բայց, ասա, հայրիկ, ինչո՞ւ են հունձը խուրձեր կապում, յետոյ թեզ դնում ու թողնում արտում, չէ՞ որ թռչունները հասիկները կը տանեն։

«Թռչունները շատ չեն տանիլ, բայց արտում չը թողնել անկարելի է, հասկերը արևի տակ չորանում են և կալսելուց հասիկները հեշտութեամբ են թափւում՝ ապա թէ ոչ դժւար կը լինէր կալսելը։

Տաք կլիմայում, ինչպէս և մեր Կովկասում, հունձը չորացնում է արտում, իսկ հիւսիսում, ուր արևը այնպէս չէ տաքացնում, չորացնում են կրակի վրայ կամ կալերում դրա համար պատրաստած չորացնելու տեղերում։

Երբ որ հասկերը չորանում են, սկսում են կալսելը։ Կալսելու համար դեղի մօտ մի հարթ տեղ են պատրաստում, նրա վրայ խուրձերը բացած փռում և ձիանների կամ եզան ու դոմէշների ուժով կամ՛ինով կալսում։ Կամը ոչ այլ ինչ է, եթէ ոչ պիրդ փայտից քաշած երկու լայն տախտակներ, որոնց ներքևի կողմից մէջը ցցած են կայծաքարի կտորտանք, որ խուրձերի վրայ անցնելուց կտրատում է ծղնօտը, դարման չինում, իսկ հասկերի միջի հասիկները թափւում։

Ռուսաստանում ուրիշ կերպ են կալսում. մի երկար փայտի ծայրին կապում են կաշւով մի ուրիշ կարճ փայտ և երկարի կոթից բռնած՝ ծեծում խուրձերը։ Դրա համար, բացի ուժը, պէտք է վարժ էլ լինել ու ճարպիկ։

Կալ թակողների մէջքը, գլուխը ցաւում է, նրանց ականջները խշշում են, բայց դեռ գործը դրանով չէ վերջանում։

Հասիկները կալսելուց յետոյ, թեղ են դնում այսինքն

դարմանախառն հատիկները հաւաքում են կալի մի կողմը և ապա սկսում խառնո տալը, որպէսզի հատիկները թեփից դարմանից ու ամեն տեսակ փոշուց բաժանուի։ Դրա համար թիակով վերցնում են հատիկները և քամու հակառակ դէպի վեր շպռտում։ Ծանր հատիկները տեղն ու տեղը վայր են ընկնում, իսկ թեփն ու դարմանը քամին քշում, հեռացնում է։

Այժմ գործածւում են աւելի կատարելագործած մեքենաներ՝ կալսելու համար։

Այդ մեքենաները բանում են ջրի, շոգու կամ թէ ձիու ուժով և մի օրում կարելի է 600—1000 պուդ և աւելի հացահատիկներ կալսել և ծղնօտն էլ անասնոց կերակրելու համար դարման կամ յարդ պատրաստել, սակայն այդ մեքենաները թանգ արժեն և դեռ շատ քիչ կալատատեր ունեն մեզանում։ Յետոյ քեզ ցոյց կը տամ այդ մեքենաները և կը տեսնես ինչքան թեթևացնում է գիւղացու աշխատութիւնը։ Բայց նրան ինչ օգուտ, քանի որ միջոց չունի գնելու։

Այս ու այն ձևով մաքրած ցորենը տանում են ջրաղացը, որտեղ և աղում, ալիւր են շինում...

—Ցիշում եմ, Հայրիկ, Ռուսաստանից գալիս, ամեն մի գիւղի մէջ քամու աղացներ կային՝ թռչունի պէս լայն բացած թևերով։

«Ցիշում եմ, այո, այն, տեղերը, ուր ջրի սակաւութիւն է, մարդիկ ստիպւած են քամու աղացներ շինել։ Բայց ուր որ ջուրը առատ է, ջրաղացներ են շինում, որովհետև ջրի միջոցաւ մարդս երբ ուզենայ կարող է աղալ, այն ինչ քամու աղացը միայն այն ժամանակն է աղում, երբ քամի կայ, որ շարժում է նրա թևերը, մինչդեռ քամի չեղած ժամանակը մնում է անշարժ կանգնած։

—Բայց ես ինչպէս վախեցայ, երբ առաջին անգամ ալրաթաթախ ջրաղացպանին տեսայ, ծիծաղեց Աննիկը, յիշելով թէ ինչպէս ինքը բղաւել է «տեսի՞լ, տեսի՞լ» և ծառաներին վախեցրել։

Ասել է ալիւրը միմիայն ցորենից ու աճարից են շինում, հարցրեց մի փոքր լռութիւնից յետոյ։

«Ո՛չ, բացի ոլորենի ու աճարի ալիւրից, դեռ շատ տեսակ ալիւրներ կան, ինչպէս վարսակի, սիսեռի, գարու։

—Մ՛թէ վարսակից ալիւր են շինում, ես կարծում էի, թէ վարսակը միայն ձիաներն են ուտում։

«Ա՜յ քաղ. վարսակի ալիւրից շատ բաներ են պատրաստում, ինչպէս և քո սիրած նուշով ու մեղրով թխուածքը։

—Ահա և գիւղը, բացականչեց Անդրիկը կանգ առնելով։

Առաւօտեան մառախուղի միջից երևացին այգինները, որոնք շրջապատել էին Թուրքաց գիւղը, որը այնքան էլ մեծ չէր, ճերմակացրած խրճիթներով, տափակ կտուրներով, լայն ու արձակ բակերով, որոնց շուրջը դեղձի ու ընկուզի ծառեր էին տնկուած։

Ա. Ա. Պալիճ-Ճան.

ԴԱՏԱՎԱՆԱՅ ԳԱՔՐԸ

Վաճայ ծովի մօս մի գիւղ կայ Դատվան,
Ուր աճպական եր լաց, սուգ ու շիւան.
Աճօրեն, աճխիկն մի գզիր այնտեղ՝
Բաղել եր հայոց զոյգ աչերի եղ։

Դզրի երեսից աւար ու թալան
Դատվանցոց համար եր չնչին մի բան.
Դզրի երեսից ծեծ, բանս ու ախտր՝
Դատվանցոց համար չեր բան անսովոր։

Դզրի երեսից այգի ու արտեր
Յափշտակեցին աճօրեն էդեր։
Դզրի երեսից բար ու բանդ եղան
Դատվանցոց տներ, է՛ւ ժամ է՛ւ սեղան։

Եկաւ օրն ու ժամ, մահւան աճկողին
Մատւ չար գզիրն, աճխիկնն, աճնոգին.
Մահից չեսոյ էլ գիւղացիներին
Ջարիմ հասցնել մտածեց գարշելին։

Հարեւաններին նա կանչեց իր մօս՝
Առնելու իբր իր վերջին կարոս.
Գիւղացիներին իր մօս երբ տեսաւ՝
Եոր հոգոց հանեց, դարձաւ ու ասաւ։

«Աճօրենութեանս չը կայ չափ, սահման.
Ժամ, պատարագի, թալման չեմ արժան.
Երբ որ ես մեռնեմ, այս է իմ կտակ,
Ինձ համբի մօտին ծառից կախ կը տաք»։

Աճօրեն գզրի կամքը կատարեց.
Բայց Դատվան գիւղը զօրեղով պատեց.
Գիւղացիներին, որպես մարդասպան,
Դատի մատնեցին, բանտերը տարան։

Ամեն դատվանցի դառնապես լալով՝
Յիշում եր գզրին նզովք կարդալով։
Գզիրն աճօրեն մահից չեսոյ էլ
Դատվանցոց գլխին փորձանք եր բերել։

Հ ա ր օ.

ԵՐԵՔ ՄՈԳԵՐ

գիպտացին երկար լռելուց յետոյ, ծանր սկսեց. Եղբայր, դու շատ չարչարուել ես և ես ուրախ եմ քո յաղթութեան. եթէ թոյլ կտաք, այժմ ես կը պատմեմ ձեզ, թէ ես ինչպէս եմ կոչուած։

Ձեզանից ամեն մէկը պատմեց իր հայրենիքի մասին, թոյլ տուէք ինձ էլ սկսել նրանից։ Ես եգիպտացի եմ. իմ անունն է Բաղդասար։ Իմ ազգը գանազանւում է միւսներից շատ յատկութիւններով, բայց ես կը խօսեմ միայն մէկի մասին։ Պատմութիւնը սկսւում է մեզանով. մենք առաջին ազգն ենք, որ սկսեցինք անցքերը գրել հետևաբար, այնպէս, որ մենք չունենք բերանացի պատմութիւն, այլ մենք ունել ենք իրականութիւնը գրաւոր, պատկերի և տաճարների ճակատի, կոթողների, գերեզմանների վրայ։ Գրել ենք թագաւորների գործքերը, անունները, փափուկ պապիրուսին ենք հաւատացել մեր փիլիսոփաների իմաստութիւնները և մեր հաւատի գաղտնիքները, բացի մէկից, որը ես ձեզ այժմ կը պատմեմ։ Աւելի առաջ Վեդից, Պարա-Բրաուից, Ուպ-Անդից, իմ Մելքոն, աւելի առաջ Հոմերից, բնագանց Պլատոնից, իմ սիբելի Գասպար, աւելի

հին չինացոց գրքերից և նրանց թագաւորներից, Մայի գեղեցիկ որդի Սկդարից, Մովսէսի Հնդամատեանից, ամենից հին է մեր Մենէս թագաւորի մասին գրուածքը։ Աւա՛, Գասպար, ո՛վ է Ելլադայի գրողի ուսուցիչները։ Շնորհիւ այդ հին գրուածքների մենք լսացանք, որ մեր նախահայրերը եկել են արևելքից, երեք սրբազան գետերի ակունքներից, հին Իրանից, որի մասին խօսեց Մելքոնը։ Նրանք այնտեղից բերին այստեղ պատմութիւնը մինչև Ջրհեղեղը և Ջրհեղեղի նկարագրութիւնը, նրանք սովորեցրին ճշմարիտ Աստծու և հոգու մասին, որ նա անմահ է։ Եթէ ուզ յաջողի գլուխ բերել այն, ինչու համար այժմ կոչուած ենք, ես կը հրաւիրեմ ձեզ մեր երկիրը և ցոյց կը տամ մեր քրմերի սրբազան գրադարանները, կը հրաւիրեմ ձեր ուշադրութիւնը մեռածների գրքերի վրայ, որոնցից կարելի է իմանալ, թէ ինչպէս մարմինը մեռնելուց յետոյ, հոգուն վիճակուած է թափառել յաւիտեան։ Հոգու անմահութեան միտքը ծագած է Միզրայիմի մէջ, դեռ անապատում չը թափառած ժամանակ, և ներմուծուած, է այդ միտքը Նեղոսի շրջակայ ժողովրդի մէջ։

Ազգերի տիրապետութեան մշտական փոփոխութիւնը այլակերպեց Միզրայիմի հին կրօնը։

Մեր արձանագրութիւնները ասում են, որ Միզրայիմի ժամանակ Նեղոսին տիրել էին եթովպացիները, հարուստ և երևակայութիւնով վառ մի ժողովուրդ, որ ցրուած էր ամբողջ Աֆրիկայում։ Բանաստեղծ պարսիկները աստուածացրին արևին, որին փոխարինում էր երկրում Օրմուզդը։ Հեռաւոր Արևելքի կրօնասէր որդիքը իրանց համար աստուածներ էին շինում փայտից և փղոսկրից։ Միայն եթովպացիները, չը գիտենալով ոչ գիր և ոչ մեքենական մի արհեստ, որ կուռք շինեն, իրանց կարիքը լրացնում էին կենդանիներին, թռչուններին սողուններին պաշտելով և բաւականանում էին դրանով։ Օրինակ, կատուն նուիրուած էր Ին Աստծուն, եզը—Իզեդային, բզեզը—Պտային. երկար մաքառումներից յետոյ, այդ կոպիտ կրօնը եղաւ նրանց թագաւորութեան սկիզբ. սկսեցին աչքաննիներ կանգնեցնել, որոնցից շատերը մինչև այժմ կանգուն կան Նեղոսի ափերին և սնապատում։ Կոթողները, լաբիւրինթոսները, պիրամիտները, թագաւորների գերեզմանները խառն շինեցին կոկորդիլոսների գերեզ-

մաննելի հետ։ Ահա թէ ինչ սոորութեան հասան Արիացոյ որդիքը։ Բայց նոքա բոլորովին չը մոռացան Աստծուն։ Առաջ ես ասացի, որ մենք պապիրուսին հաւատում էինք մեր կրօնքի բոլոր գաղտնիքները, բացի մէկից։ Այժմ կը խօսեմ այդ մէկի մասին։ Մի ժամանակ մեզ վրայ թագաւորում էր փարաւոններից մէկը, որը սիրում էր փոփոխութիւններ, նորմոծութիւններ, որպէս զի նոր, մի բոլորովին նոր սիստեմ մտցնէ երկրում, հինը բոլորովին դուրս քշելով։

Այն ժամանակ հրէաները սորուկ էին մեզ մօտ։ Նոցա կրօնքը հալածւում էր. և երբ այդ հալածանքը անտանելի եղաւ, նոքա ապատեցին մի հրաշքով, որը մարդկանց ուղեղից երբէք չի ջնջւի։ Ես խօսում եմ արձանագրութիւններից։ Հրէաներից մէկը, Մովսէս անունով, գնաց պալատ, խնդրեց աստծու անունով փարաւոնից, թոյլ տալ իր ազգին թողնել այդ երկրից հեռանալու։ Փարաւոնը մերժեց, բայց նոքա փախան. փարաւոնը ընկաւ նոցա յետևից և խեղդուեց ծովում։ Ժամանակակից քուրմերը գրեցին այդ անցքը. ես այժմ գտել եմ այդ գաղտնիքը, որը գրած չէ ոչ մի արձանագրութեան մէջ։

Այդ դժբախտ փարաւոնից յետոյ, իմ հայրենիքում կրօնը բաժանուեց երկուսի. մէկը դարձաւ մասնաւոր, իսկ միւսը հասարակական։ Նա, որ ճանաչում էր շատ աստւածների՝ դա ժողովուրդն էր. իսկ միակ աստծուն հաւատացողը՝ քուրմերն էին, որ ծածկում էին ճշմարտութիւնը ժողովրդից։ Երկար ժամանակ այդ ճշմարտութիւնը համբերատար մնում էր ծածուկ. քուրմերը աշխատում էին ծածկել բոլորովին, բայց ճշմարտութիւնը ի հարկէ երբէք չի թագնուել. նա նման է մի սերմի, որ ապատում է յարմար ժամանակի, որպէս զի ծլի։ Ահա ես ինքս այդ դասակարգիցնեմ, ես ինքս քուրմ եմ, ծնւած եմ Ալէքսանդրիայում, կրթութիւն ստացել եմ կոչմանս համեմատ։ Ես շատ շուտով հիասթափւեցի մեր կրօնից, որի հիմնաքարը այն էր, որ թէ բարի և թէ չար մարդկանց հոգիները, մահից յետոյ, տեղափոխւում են սորին կենդանիների մէջ, որպէս զի աստիճանաբար կատարելագործւելով, հասնեն ամենաբարձր կատարելութեան, որքան մարդուս բնաւորութեան յատուկ է։ Երբ ես յսեցի պարսից կրօնի «Հոյսի» թագաւորութեան և արքայութեան

մասին, որտեղ նոցա կարծիքով կարելի է մտնել միայն անցնելով այն կամուրջը, որի վրայով կարող են անցնել միայն արդարները, ես սկսեցի մտածել։ Մտքերը ոչ թէ ցերեկը, այլ նոյն իսկ գիշերը, հանգիստ չէին տալիս ինձ։ Ես սկսեցի համեմատել հոգու կենդանիների մէջ յաւիտեան թափառելու իդէան՝ երկնքի յաւիտենական կեանքի իդէայի հետ և ասում էի ինքս ինձ. եթէ Աստուած արդարադատ է, ինչպէս ինձ սովորեցրել են, ինչո՞ւ բարին չի ջոկում չարից։ Վերջապէս, ես պարզ հասկացայ մարդուս կրօնի այն ճշմարտութիւնը, որ ժամը մի մոլորեցնող շաւիղ է, որի առաջ կանգ են առնում և յետ դառնում արատաւոր մարդիկ. իսկ հաւատացողները համնում են բարձր կեանքի — ոչ թէ նւիրական նիրւանի մէջոցով, այլ գործունեայ կեանքով, ճշմարտութեան մէջոցով։ Իմ այս գիւտից մէկ հարց ծագեց իմ մէջ. ինչու ճշմարտութիւնը պիտի թագնւի բոլորից և միայն քուրմերի նպատակներին ծառայի։ Պատճառներ այժմ ինձ համար գոյութիւն չունէր։ Ժամանակը փոխւել էր, Ռամզէսի օրերը անցել էին, Եգիպտոսում թագաւորում էր Հռոմի շրջանը։ Ալէքսանդրիայի մարդաշատ թաղերից մէկում սկսեցի իմ առաջին քարոզները, արևելքից և արևմուտքից գալիս էին ունկընդիրներս. ուսանողները գրադարան գնալու ժամանակ, քուրմերը, թափառաշրջիկները, հարուստները, աղքատները, բոլորը հաւաքւում էին շուրջս։ Ես խօսում էի աստծու, հոգու, չարի և բարիի, ճշմարտութեան, սուտթեան, բարեգործների հատուցման մասին։ Դու, եղբայր Մելքոն, հալածւեցար քարերով, իսկ իմ ունկընդիրներս սկզբում լսելիս զարմանում, իսկ ապա ծիծաղում էին։ Նորից փորձեցի խօսել, բայց խօսքեր էին նետում հայհոյելիս, ծաղրում էին ինձ և քարոզներիս։ Ես յաջողութիւն չունեցայ։ Երկար ժամանակ որոնում էի իմ անյաջողութեան պատճառը, վերջապէս գտայ։ Գետի հոսանքով, մի օրւայ ճանապարհի վրայ, գտնւում էր մի գիւղ, որի բնակիչները հովիւներ և այգեպաններ էին։ Մակոյկ նստեցի և լողացի նրանց մօտ։ Երեկոյեան հաւաքեցի ժողովրդին և սկսեցի քարոզել՝ ինչ քարոզում էի քաղաքում։ Այստեղ ինձ չէին ծաղրում։ Հետևեալ երեկոյեան նորից սկսեցի խօսել, նոքա հաւատացին և ուրախացան. այնպէս որ շուտով իմ համբաւը տարածւեց շրջակայքում։ Երրորդ

ժողովուրդից յետոյ ժողովուրդը արդէն պատրաստ էր ազօթք անելու։ Վերադարձայ քաղաք. լողում էի մակոյկով գետի վրայով։ Գիշեր էր։ Երկինքը աստղալից և կարծէք երբէք այդպէս պարզ չեն փայլել աստղերը, ինչպէս այդ գիշեր։ Մակոյկով լողալով, ինքս ինձ մտածում էի. ես հասայ այն եզրակացութեան, որ ով ուզում է վերափոխել կեանքը, չը պէտք է սկսի իր քաղցները պալատներից և հարուստներից, այլ պէտք է գնայ նրանց մօտ, որոնց զբաղմունքեան բաժակը դառարկ է, այն է թշուառների և արհամարհածների մօտ։ Վերադառնալով քաղաք, ամենից առաջ աշխատեցի իմ կարողութիւնը այնպէս կարգադրել, որ նրանից ստացածը կարողանար միայն ինձ ապրեցնել։ Այդ օրից սկսեցի թափառել Նեղոսի հոսանքով դէպի վեր և ցած, մանելով գիւղերը, ամեն գեղերի մօտ, որ բնակւում էին շրջակայքում, քարոզում էի ճշմարտութեան մասին։ Բայց մի միտք ինձ շատ անհանգստացնում էր. ինչ կը լինի իմ աշխատանքի հետևանքը, մի՞թէ նա պէտք է անհետանայ ինձ հետ։ Դրա համար ես մտածում էի՝ լաւ չի լինի արդեօք իմ գործը պահել մի կազմակերպութիւնով. որպէս զի ոչինչ թագցրած չը լինեմ ձեզանից, կասեմ ձեզ, որ ես փորձեցի մինչև անգամ գլուխ բերել իմ այդ միտքը, բայց ինձ չը յաջողուեց։ Եղբայրներ, աշխարհը այնպիսի մի դրութեան մէջ է, որ վերանորոգիչը պէտք է աստուածային ձիրք ունենայ, որպէս զի կարողանայ յեղաշրջել մարդկանց։ Եթէ նա գայ Աստծու անունով, դա դեռ բաւական չէ, նա այդ կոչման ապացոյցները պիտի ունենայ։ Հարկաւոր է, որ նա մեզ ցոյց տայ այն, ինչու մասին կը խօսի մարդկանց հետ. մարդկանց խելքերը այնպէս գրաւուած է միֆով (առասպելականութիւն), այնպէս նոցա ուղեղում արմատացած է նա, որ յեղաշրջելու համար պէտք է հալածել, թողնելով իր հետքում արիւնոտ դիծ։ Ես ուզում եմ ասել, որ նորադարձները աւելի պիտի համաձայնեն մեռնել, քան իրանց պաշտածից հեռանալ։ Բայց ո՛վ, բացի Աստծուց, այս դարում կը կարողանայ հաւատքը բարձրացնել մինչև այդ բարձրութեան։ Աշխարհը փրկելու համար չը պէտք է քանդել նրան. այժմ ճշմարտութիւնը պիտի երևայ, նա ինքը պէտք է աշխարհ գայ։ Ես հասկացայ թէ ինչու ինձ չը յաջողուեց կազմակերպութիւն հաստատել։ Որովհետև

ես չունէի աստուածային ձիրք, իմ կասկածը գործիս ապագայի մասին ինձ շատ տխրեցնում էր։ Ես հաւատում եմ աղօթքին. ձեզ նման թողնելով մեծ ճանապարհները փոխուեցի այնտեղ, որտեղ չը կային մարդիկ և որտեղ միայն մենակութիւնը և լռութիւնն է թագաւորում։ Հեռանալով Աֆրիկայի անյայտ խորշերից մէկում, Նեղոսի հոսանքով, հինգերորդ ջրվէժից և գետի խառնարանից վերև, Բահր-էլ-Աբիադում, այնտեղ սկսեցի միշտ մտածել և աղօթել։ Այնտեղ կայ մի լեռ, երը նա առաւօտեան ձգում է իր ստուերը դէպ արևմուտք, արևից հալած ձիան փոքրիկ հեղեղները թռիչքներով հոսում և լցւում են նրա փեշերի վրայ փռւած մի լճում։ Այդ լիճը մեծ գետի մայրն է։ Մի ամբողջ տարի լեռը ինձ ապաստանեց։ Կերակրւում էի արմաւենիների պտուղով։ Մէկ անգամ, գիշերը, մտն էի գալիս լճի մօտ գտնւած արմաւենիների անտառի մէջ մտածելով, թէ երբ պէտք է տեսնեմ մարդկանց դարձը։ Հայելանման լճի մակերեւոյթը փայլփլում էր աստղերի ցոլքից։ Ցոլքերից մէկը ինձ թւաց թէ թողեց իր տեղը և շարժւելով մակերևոյթի վրայ, դուրս եկաւ և այնքան փայլուն ելք ստացաւ, որ նրա լոյսը կուրացնում էր իմ աչքերը. նա մօտեցաւ ինձ և կանգնեց իմ գլխի վերև շատ մօտ։ Ես ընկայ երեսի վրայ և ծածկեցի երեսս. յանկարծ մի ձայն լսեց. «Քո բարի գործերը յաղթեցին. օրհնած լինես Միզրայիմի որդի, փրկութիւնը մօտենում է. երկու այն անձնաւորութիւնների հետ, որոնք գալիս են աշխարհի հեռաւոր կողմերից, դու կը տեսնես Փրկչին և վկայ կը լինես նրա երեւալուն. վեր կաց առաւօտեան և գնա նոցա հանդէպ. և երբ հասնէք Երուսաղէմի դռների մօտ, հարցրէք. «Որտեղ է հրէից ծնած թագաւորը, որովհետև մենք տեսանք նրա աստղը և եկանք երկրպագելու նրան». հաւատա՛ սուրբ հոգուն և նա քեզ կառաջնորդի։ Ես այլ ևս չէի կասկածում, որովհետև ինձ լուսաւորող լոյսը առաջնորդում էր ինձ։ Առաջնորդւելով նրանով, ես իջայ Մեմֆիս, որտեղ պատրաստւեցի անապատից անցնելու համար. գնեցի մի սպիտակ ուղտ, ճանապարհ ընկայ. անցայ Սուէզը, Մովսէսյ և Ամմոնացոց երկիրները և ահա հանդիպեցինք միմեանց։ Արդէն ձեզ ասացի, որ ես տեսնում եմ մի մեծ միտք մեր բոլորի պատմութեան մէջ. նա որին մենք կոչւած

ենք երկրպագելու, կոչւում է հրէաների թագաւոր. մեզ հրամայած է գտնել նրան, այդ անունով։ Երբ արդէն հանդիպենք, լսեցինք միմեանց, մենք կը ճանաչենք և նրան որպէս փրկիչ ոչ թէ հրէաների համար միայն, այլ բոլոր ժողովուրդների։ Երբ մենք կը գտնենք նրան, ամեն մէկը մեզանից վերադառնալով հայրենիք. աշխարհքը մեր միջոցով կը ճանաչի սէր նոր ճշմարտութիւն, որ յաւիտենականութիւն վաստակելը կը լինի ոչ թէ սրով, այլ հաւատով, սիրով և բարի գործերով։

Բաղդասարը վերջացրեց իր խօսքը. տիրեց խորին լռութիւն. նոքա ամենքը զարմացած էին իրանց, երեքին էլ, աստծու յայտնութեան վրայ։

Քիչ յետոյ, վերկացան, դուրս եկան վրանից. լուսինը առաջւայ նման թագաւորում էր անապատում. երկնքում արևը արդէն մայր էր մանում. ուղտերը քնած էին։ Նոքա վրանը քանդեցին, առաջւայ նման տեղաւորեցին և այժմ երեքով միասին ճանապարհ ընկան դէպ արևմուտք։ Ցուրտ գիշեր էր։ Ուղտերը հանգիստ կերպով գնում էին միմեանց յետևից։ Լուռ էին տէրերը։ Շուտով դուրս եկաւ լուսինը և այդ երեք բարձր և սպիտակ մարմինները առաջ էին գնում. լուսնի լոյսն տակ նոքա նման էին անապատի ուրուականների, որ կարծես փախչում էին խաւարից։ Յանկարծ, նոցա առաջ, լեռան յետևից, երևաց փայլփլացող մի լոյս. նոցա աչքերը փայլեց տեսնելով այդ լոյսը, սրտերը թրթռաց և երեքն էլ միասին ուրախ գոչեցին.

— Աստղը... աստղը. Ճառած մեզ հետ է. առաջ, առաջ...

Փախ. Յով. Կարապետեան

ՀՐԱԲՈՒՂԽ ԵՒ ԵՐԿՐԱՉԱՐԾ

(շարան. «ԱՂԲԻՒՐ» № 2-ից)

—

Երկրի կազմութիւնը. Երկրի այժմեան երկրաբանական կազմութիւնը արդիւնք է նորա յաջորդական փոփոխութիւնների, որոնց ենթակայ է եղել նա իւր գոյութեան ամբողջ ընթացքում. հետևապէս և երկրաբանական կազմութեան նկարագիրն է միաժամանակ և նորա պատմութիւնը։ Երկիրը իւր զարգացման տարբեր աստիճաններ, տարբեր շրջաններն է ունեցել և իւրաքանչիւր շրջան ունի իւր առանձին պատմութիւնը։ Մեր նպատակը չէ առաջ բերել այստեղ երկրի մանրամասն պատմութիւնը՝ իւր առանձին շրջաններով հանդերձ, այլ կաշխատենք միայն նորա նախնական վիճակի և աստիճանաբար զարգացման մասին մի ամփոփ տեղեկութիւն տալ, նաև ցոյց տալ, թէ ինչ նիւթերից է կազմած այժմ երկրի կեղևը, ինչպէս են դասաւորած այդ նիւթերը երկրագնդի ահագին գնդածի մէջ և այլն։

Երկրի կազմութեան մասին կայ մի կարևոր ու ուշագրաւ հիմա դեռ չհերքուած եղրակացութիւն, որ մեր երկրի միջուկը գնդաւոր է հրահեղուկ վիճակի մէջ, ծածկուած դրսից կարծր կեղևի տակ գնդաւոր հալած մետաղների շերտով և գնդազան շերտերից բաղկացած պինդ կեղևը, որի մակերևոյթի վերայ ապրում ենք մենք, կազմում է այդ հրահեղուկ միջուկի խիստ բարակ ծածկոցը և կամ, եթէ միջուկը կարծր է, ծածկուած պէտք է լինի դրսից կարծր կեղևի տակ գնդաւոր հալած մետաղների շերտով։ Գիտնականներից շատերը այս եղրակացութեանը հասել են տարբեր, սակայն իրար չհակասող փորձերով և դիտողութիւններով. իսկ մի քանի ուրիշ գիտնականներ ընդունում են, որ երկիրը վաղուց բոլորովին սառել է։

Գերմանացի երիտասարդ փիլիսոփայ Կանտի ու նշանաւոր մաթեմատիկոս Լապլասի կարծիքով, հազարաւոր դարեր մեզանից առաջ արեգակը և մոլորակները բաժանուած չէին միմեանցից, ինչպէս այժմ, այլ բոլորը միասին կազմում էին մի ահագին գազային մարմին, որ պտտւում էր իւր առանցքի շուրջը։ Սկզբում այդ մարմնի չափումները շատ մեծ է եղել, բայց յետոյ, ժամանակի ընթացքում, քանի գնացել սառել է։ Այն բոլոր նիւթերը, որ ներկայումս երկրի և միւս մոլորակների վերայ գտնւում են խառնութեան գնդազան դրութիւններով,

այն է կարծր, կալծրահեղուկ, ծորահեղուկ և առաձգականահեղուկ կամ գազանման, սկզբում ամբողջապէս կազմում էին մի զանգուած, որը, չնորհիւ ջերմութեան արտաքոյ կարգի բարձր աստիճանի, գտնւում էր գազային կամ օդանման խիստ նոսր վիճակի մէջ: Տիեզերքի այն միլիօնաւոր մարմինները, որ ներկայումս արեգակնային զանազան համակարգութիւնների են բաժանուած, այն ժամանակ դեռ գոյութիւն չունէին: Այդ ֆիզիքական օրէնքների հիման վերայ, գազային մարմնից հասարակածի մօտ բաժանւում է մի օղակաձև մաս, մի հրագունդ և պտտւում է նոյն ուղղութեամբ, ինչպէս գլխաւոր մարմինը: Այդ օղակաձև մարմինը հետզհետէ բաժանւում է միքանի կտորների, որոնք պտտւում են միևնոյն ուղղութեամբ, ընդունելով գնդակի ձև: Այդ գնդակաձև կտորներից գոյացել են մոլորակները, իսկ մոլորակներից անջատուել են նոր օղակներ, որոնք խտանալով, կազմել են նոր շրջող գնդեր կամ լուսնեակներ, որոնցից միայն մէկը երկրի շուրջն է պըտտւում, իսկ գլխաւոր մասից, որը գտնւում էր կենդրոնում և որից բաժանուեցին մոլորակները, առաջացաւ յետագայ ժամանակներում մեզ ծանօթ արեգակը: Այսպիսով խտացման և անջատման այս հասարակ գործողութիւնները աստիճանական սառուցմամբ յաճախ կրկնուել են և առաջ են բերել զանազան արեգակնային համակարգութիւններ, մոլորակները, որոնք պտտւում են՝ շրջան անելով իրենց կենդրոն կազմող արևի շուրջը, իսկ այդ մոլորակների արբանեակները կամ լուսինները պտտւում են իրենց ծնող մայր մոլորակների շուրջը:

Մոլորակները բաժանուելով գազային մարմնից, բնական է, որ սկզբում ունենային գազային դրութիւն, բայց յետոյ այդ դրութիւնը փոխուեց: Դրա պատճառն այն է, որ մոլորակները շրջապատող այսպէս կոչուած «միջմոլորակային կամ միջաստեղային տարածութիւնը» սառնիկ ցած, պակաս ջերմութիւն ունի: Ահա այդ պատճառով տիեզերքի մէջ շրջող մարմինների նախնական գազային դրութիւնը աստիճանական սառուցմամբ և խտացմամբ՝ տանում է հրահեղուկ դրութիւն: Սառուցման և խտացման չնորհիւ մեծամեծ կոյտերն ազատւում են հակայական ջերմութիւնից, և այդպիսով շրջող արեգակները, մոլորակներն ու լուսինները ձևակերպուելով դառնում են հրաշէկ գնդեր և մատակարարում լոյս ու տաքութիւն:

Միջմոլորակային տարածութեան ջերմութիւնը գիտնականների հաշուով՝ հասնում է—60° կամ մինչև անգամ—120°, այսինքն զրօից 120° ցած: Սա մի այնպիսի ցուրտ է, որ մենք երևակայել անգամ անկարող ենք և հէնց այս ցուրտ շրջանի ազդեցութեան տակ երկիրը կազմող գազերը սկսեցին կամաց կամաց թանձրանալ, մինչև որ հասան հեղուկ դրութեան: Բոլոր շրջապատող տարածութեան ազդեցութիւնը երկրի վերայ դրանով չվերջացաւ, որովհետև նրանց ջերմութիւնների

մէջ դեռ մեծ դանազանութիւն կայ։ Հրահեղուկ գնդի մակերեւոյթը դեռ շարունակում է կորցնել իւր ջերմութիւնը, նա կրկին խտանում է, թէպէտ բոլոր մասերում ոչ միակերպ. այն մասերը, որոնք անմիջապէս շփւում էին շրջապատող ցուրտ տարածութեան հետ, այսինքն երկրագնդիս արտաքին կողմերը, բնականաբար աւելի շատ ջերմութիւն էին կորցնում, քան կենդրոնը։ Սրա հետեւանքն այն եղաւ, որ երկրագնդիս արտաքին մասերը սառչելով, առաջ եկաւ բարակ ու կարծր քարէ կամ հողային կեղեւ, որ պատում է հրահեղուկ միջուկը։ Բայց կենդրոնական հալւած մասը քանի գնում պակասում էր, իսկ արտաքին կեղեւը, ընդհակառակը, հաստանում, որովհետեւ ցուրտը շարունակում էր ներգործել արտաքին կողմերից դէպի կենդրոնը։

Այսպիսով երկիրը, ունենալով արտաքին կողմերում պինդ կեղեւ, իսկ կենդրոնում լինելով հալւած, միջաստեղային սառն տարածութեան մէջ աւելի և աւելի սկսեց սառել։ Բայց յայտնի է, որ տաք մարմինները պաղելով՝ սեղմւում են և աւելի փոքր ծաւալ ստանում. ուրեմն և սառած կեղեւի տակ գտնւող երկրի տաք միջուկը պաղելով պէտք է աստիճանաբար փոքրանայ իւր ծաւալով։ Դժուար չէ իմանալ, թէ ինչ կպատահէր երկրի քարացած կեղեւի հետ, երբ նրա տակ գտնւող հրահեղուկ միջուկը կծկւի, սեղմւի։ Ի հարկէ կեղեւն ևս պէտք է յարմարւի այդ կծկումներին, իսկ երկրի քարէ հաստ կեղեւի կծկումը անշուշտ նոր մակերեւոյթի վերայ ծալքեր, կնճիռները կը կազմէին այսպէս օրինակ՝ Կովկասի լեռնաշղթան, Ալպեան լեռները և միւս այլ ամենաբարձր սարերը հէնց նոյն հսկայական կնճիռներն են, որ գոյացել են կեղեւի կծկւելուց։ Այն շերտերը, որոնցից կազմւած է կեղեւը, աստիճ ծռմռւել են այնտեղ, ուր գոյացել են լեռները. այդպիսի տեղերումը շերտերը մինչև իսկ ճեղքւել են։ Հրահեղուկ միջուկը այդ ճեղքւածքներից դուրս է բղխել և վերստին պնդացել։ Այդպիսով առաջ են եկել այլ և այլ բարձունքներ ու խորութիւններ, ցամաքներ ու ծովեր, սարեր ու ձորեր։ Այստեղից հասկանալի է, որ երկրագնդի կենդրոնում գտնւող հեղուկ մասերը կարող են յարաբերութիւն ունենալ երկրիս մակերեւոյթի հետ աւելի հեշտ լեռնոտ տեղերումը։

Երբ սառած երկրագնդի ջերմութիւնը մի որոշ աստիճան իջել է, հետեւել է մի նոր շատ կարեւոր երեւոյթ, այն է՝ առաջին անգամ առաջ է եկել ջուրը։ Սրանից առաջ ջուրը գոյութիւն ունէր մթնոլորտի մէջ իբրև գոլորշի և երբ մթնոլորտի բարեխառնութիւնը եռացման կէտից իջել էր, այն ժամանակ միայն ջուրը կարողացել է ծորելի-հեղուկ դրութիւն ստանալ։ Այդ ջրի այժմ շնորհիւ, առաջ է գալիս երկրի յետագայ կերպարանափոխութիւնը։ Անձրեւի ջրերը երկրի կեղեւի բարձունքները լւանում, սրբում են և նոցա փոշով լցնում երկրի խորութիւնները և շերտ շերտ դասաւորում իրար վերայ։ Այդ ժամանակաւորից սկսած, ջրանիստ կազմութիւնն անընդհատ շարունակւել է և առաջ

բերել հակայական շերտաւոր լեռնային զանգւածներ, ջրանիստ քարա-ցուխներ։

Երկրիս կեղևը ամէն տեղ միևնոյն հաստութիւնը և հանքային կազմութիւնը չունի։ Կեղևի մակերևոյթի փոս տեղերը ջրատարան պատճառներով հետզհետէ լցւել են ջրերով ու կազմւել ծովեր, իսկ ջրերից դուրս կամ բարձր մնացել են կեղևի ցամաք մասերը։ Երկրիս կեղևը կազմւած է զանազան նիւթերի միմեանց վերայ դարսւած հաստ կամ բարակ շերտերից՝ սևահողից, աւազից, կաւից, զանազան հանքերից, ջրից և այլն։ Այս շերտերը դասաւորւած են միմեանց վերայ կամ հորիզոնական դիրքով, կամ թեք, կամ ուղղահայեաց և կամ ալիքաձև։ Բայց բացի հանքային տեսակներից, երկրի բազադիչ մասն են կազմում նաև կենդանիների և բոյսերի մնացորդները։

Երկրի որ մասումն ուզում է լինի, ամենավերին շերտը կամ ծածկոցը համարեա միշտ կազմում է բուսականութիւնը, մի տեղ խոտ է, միւսում անտառ, երրորդում եղէգ, կամ մացառներ և այլն։ Երբեմն երկրի մի որոշ մասը զուրկ է լինում բուսականութիւնից։

Բուսական շերտի տակ մինը նկատում ենք բուսական հող, որի վերայ բուսնում են բոյսեր։ Բոյսերը այս շերտի մէջ են արձակում իրենց արմատները և ծծում նրանից այնպիսի նիւթեր, որոնցից կազմւած է ինքը։ Բուսական հողը տարբեր տեղերում տարբեր է լինում թէ գոյնով և թէ բաղադրութեամբ, երբեմն կարծր մոխրագոյն կաւից է բաղկացած լինում, երբեմն փափուկ, հեշտ փշրւող կրախառն կաւից կամ աւազախառն կրից, երբեմն շիկագոյն կամ դեղին աւազից և երբեմն էլ այնպէս քարքարոտ, որ համարեա ամբողջապէս խճի շերտ է ներկայացնում։ Յամենայն դէպս երկրի բուսական շերտը բաղկացած է մանրիկ մասերից, փշրւածքներից կամ խոշոր կտորներից, որ, հաւանական է, յառաջացած պիտի լինի որևէ կարծր հանքային տեսակներից։ Եթէ խոշորացոյցով նայենք, պարզ կերպով կտեսնենք նոցա վերայ քայքայման հետքեր. բոյսերի արմատները թափանցելով այդ շերտի մէջ, հանքային տեսակների մէջ ճեղքւածքներ են բաց անում, որոնց միջով անձրև ու օդը թափանցում են ներս։ Բացի աւազից, կաւից և կրից, բուսական հողը իւր մէջ պարունակում է շատ կամ քիչ քանակութեամբ գործարանական նիւթեր, որ փտած, նեխւած բոյսերից և կենդանիներից են յառաջանում. աւանդ դրան հողը կըզրկւի իւր պտղաբերութիւնից։ Բուսական հողի շերտի խորութիւնը փոփոխական է։ Սովորական հաստութիւնը 3–4 ոտնաչափ է, բայց ժայռերի վերայ սովորաբար պակաս է լինում, երբեմն մի մատնաչափ, թէպէտ պտղաբեր հովիտներում այդ հաստութիւնը կարող է հասնել մինչև մի քանի արշին։

Երկրի մի շերտը կոչւում է ենթաշերտ, որ համարեա բաղկացած է նոյն նիւթերից, ինչ նիւթերից բուսական շերտը, միայն ոչ այդքան շատ մանրած, փշրւած. բացի դրանից գործարանական նիւթերն այստեղ աւելի պակաս են։ Սովորաբար միայն խոշոր բոյսերի, ծառերի արմատները կարողանում են հասնել մինչև այս շերտը։

Ենթաշերտի տակ գտնւում են լեռնային տեսակները, որոնց աստիճանաբար քայքայւելուց յառաջանում է բուսական շերտը։ Լեռնային տեսակները խիստ տարբերւում են իրարից. սոցա տեսակների կարևոր յատկանիշների հետ ունեցած թեթև ծանօթութիւնը մեզ հնարաւորութիւն կտայ աւելի լաւ հասկանալու, թէ ինչպէս են տարածւած այն

նիւթերը, որոնցից կազմած է ցամաքը և թէ ինչ դրութեան մէջ է մեր մոլորակը։

Երկրաբանները ուսումնասիրել և տեսել են, որ լեռնային տեսակների շերտերի կամ խաւերի մէջ երկու տեսակ կազմութիւն կայ՝ Պլուտոնեան (հրաբղխային) և Նեպտունեան (մրրրաբ)։ Առաջին շերտը առաջ է եկած երկրի հրահեղուկ զանգուածի սառելուց, իսկ երկրորդը ջրային ողողումներից և ջրերի յատակներում կանոնաւոր կերպով շերտ շերտ նստող շարքերից։ Սա չորս շրջանի է բաժանւում՝ ա. Նախնական շրջան, բ. Հին շրջան, գ. Միջին շրջան և դ. Նորագոյն շրջան։ Երկիրը իւր կազմութեան տարբեր շրջաններում, տարբեր փոփոխութիւնների է ենթակայ եղել։ Ամենաառաջին խաւերը կամ շերտերը հին են, իսկ վերայինները նորագոյն ժամանակի ծնունդներն։ Բաւական է միայն մի հարևանցի հայեացք ձգել համոզուելու համար, որ հանքային տեսակների մեծ մասը, ինչպէս և բուսական շերտը կազմել են շատ հին լեռնային տեսակների քայքայումից յառաջացած կտորներից, քարերից։ Այսպէս օրինակ աւազաքարը, որ դաշտավայրերի, բլուրների և լեռների կմախքն է կազմում, բաղկացած է հասարակ աւազի հատիկներից։ Թերթաւոր կաւը և հասարակ թերթաքարը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կարծրացած կաւ կամ տիղմ։ Այս բոլոր դէպքերում այն նիւթերը, որոնցից կազմած են լեռնային տեսակները, բերած են եղել շատ հին ժամանակներից, ջրի մէջ այս ու այն կողմ գլորւելով, թաւալւելով, և կազմակերպւել ճիշտ այնպէս, ինչպէս ներկայումս խիճը, աւազը և տիղմը։ Ջրի այդ քայքայած նիւթերից կազմած լեռնային տեսակները ահագին քանակութեամբ, մի քանի հազար ոտնաչափ խորութեամբ կուտակւել և կազմել են բարձր լեռնային գօտիներ և կամ տարածած են ցած տեղերում։ Ընդարձակ հարթութիւնների մեծ մասի վրայ բուսական շերտի տակ ընկած են այդպիսի լեռնային տեսակներ։ Լեռնային տեսակների ամենաստէր ընկնող յատկութիւններից է համարւում նրանց շերտաւոր դասաւորութիւնը, որոնք ունենում են մի մատնաչափից սկսած մինչև մի քանի ոտնաչափ կամ արշին հաստութիւն և կանոնաւոր կերպով դասաւորած են լինում միմեանց վրայ։

Այս հանքային տեսակների հետ միասին երբեմն պատահում են և ուրիշները, որոնք կամ ամբողջապէս, կամ մեծ մասամբ բաղկացած են լինում բուսական և կենդանական մնացորդներից։ Այսպէս օրինակ, աւազաքարի և կարծրացած կաւի զանգուածի մէջ պատահում են երբեմն փիլիկի (папоротникъ) տերևների հետքեր, ուրիշ բոյսերի տերևների, ցօղունների և արմատների մնացորդներ։ Բուսական այդ մնացորդները երբեմն այնքան շատ են հաւաքած լինում, որ կազմում են քարածուխի սև կամ գորշագոյն շերտեր, որ այժմ գործ է ածւում մարդու համար իբրև վառելիք։ Սակը նախապատմական ծառերի ռեհինից կազմած մի քար է. սրա մէջ երբեմն կամ ամբողջ կենդանիներ (ճանճ, սարդ և այլն) և կամ այդ կենդանիների անդամներից մի քանիսը փակւած են լինում։

Աւելի յաճախ պատահում են այնպիսի լեռնային տեսակներ, որոնք գլխաւորապէս կամ բացառապէս բաղկացած են կտորւած խեցիներից, բուսից կամ կօրալներից և այլ կենդանական մնացորդներից։ Այսպէս են կազմած կրաքարերից շատերը։ Կաւիճը ծովային մանրիկ կենդանիների կրային պատեանները է բաղկացած. միայն Ռիւգէն կղզու կաւիճի մէջ 142 տեսակ այդպիսի կենդանիներ կան։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Ձայնագրեց եւ դաշնակեց
Կոմիտաս վարդապետ

Ծանր.



Քաժին փչում ա պաղ պաղ.
Լերդ ու Թոքս անում ա դաղ։

Եար, ինձ բէմուրաղ արիր,—
Սկըզդ ինձնէ զատ արիր։

ՋԻԱՐՃԱԼԻՔ

Հաճելուկներ. Առաջարկներ

Սև, հատ տառերից կազմել հայկական մի առած հինգ բառից բաղկացած։

Ոհ ինչ անուշ եւ ինչպես գով
Առաւօտուց փըչես հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսիկ փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց
Գնա անկիր արեւս 'ի բաց։

1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15 Այս թիւերը փոխել տառերի, որպէսզի ստանաք մեր նորագոյն բանաստեղծներից մէկի անունն ու ազգանունը։

1. 15. 11. 10. 5. 4.=Հայոց հին դիցուհու անուն.
10. 1. 2.=տճային քաչուն.
8. 13. 2. 9. 15.=Ծովակ Հայաստանում.
8. 7. 8.=Բաղաք Կիլիկիայում.
3. 8.=անձնական դերանուն.
12. 3. 14. 15. 6.=ամենաթանկ բանը արարածների համար:

Մեր մեռած բանաստեղծներից մէկի ազգանունը.

1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12.

3. 2. 5.=մագերի գոյն։
8. 11. 1. 4. 5.=նագուստ.
3. 7 12. 8. 10. 11. 12.=մի նոյ աստուածաբանի ուղանունը.
3. 2. 9. 9. 4.=Անգլիացի պօէտ.
6. 7. 12=խմելիք, որ կարիք են պատրաստում։

120-ից հանել 18-ը, որ մնայ 92.

Առաջ. Յով-Մար.

1. Ես մի տեսակ ուտելիք գիտեմ,
Որին երբ եփել են ուզում՝
Որքան էլ որ աղ են գցում կաթսայում,
Բղտրովին աղի համ չեն զգում։

---

2. Մի բառ կայ, ամեն առարկայի ներհետի մասը կազմող,
Առաջին տառը որ վերցնեն, տեղը «կ» դնեն, ամենին ծիծաղեցնող.
Երկրորդ տառը եթէ հեռացնէք,
Մեռնողի կարգադրութիւնը կը տեսնէք։

---

3. Վերցրէք նիւթերից բաղկացած մի շինուածք,
Մօտը դրէք անուանի մի բաղաք,
Մեր կեանքի մի որոշ ժամանակը կստանաք.
Դրա վերջին տառը երբ հեռացնայ,
Անշունչներին յատուկ մի զգեստ կը դառնայ.
Դրա էլ առաջին եւ երրորդ տառերը որ տեղափոխէք,
Մէջը ոչ ոք չը քնակող մի զարհուրելի տնակ կը տեսնէք.
Վերջապես դորա էլ վերջը մի «ա» դրէք եւ հանկարծակի կարդացէք,
Մի սարսափելի անմարդաբնակ եւ ամայի տարածութիւն կը տեսնէք

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

և

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Գ.

1. Տրդատի խղճահարութիւնն ու խելագարութիւնը:

—

Սուրբը կոյսերի հաստատուն հնալը իրանց բրիստոնէական հաւատին, խմբովին նահատակուելը Վաղարշապատի պարիսպների տակ, նրանց անթաղ բաց օթեայ ընկած մարմինները այնպիսի անակընկալ դէպքեր էին, որ չէին կարող խորը տպաւորութիւն չը թողնել թէ նահատակութեան պատճառ եղողի և թէ ականատեսների վերայ: Այս խորը տպաւորութեան տակ, խըղճից տանջուած Տրդատը՝ խելագարուեց: Ագաթանգեղոսն ասում է, որ թագաւորի հետ հայ մեծամեծներից շատերն էլ հոգեկան հիւանդ գրութեան մէջ էին:

Տրդատի քոյր Խոսրովիդուխտը հինգ անգամ երազ տեսաւ, որ Աբրահամի Վիրապի մէջ ձգուած Գրիգորը կենդանի է, և կարող է բժշկել խելագարուած թագաւորին ու նրա աւազանուն: Նրան չէին հաւատում, որովհետև չէին կարծում թէ մահապարտների վիրապում Գրիգորը կարող էր մօտ 15 տարի կենդանի մնալ: Վերջապէս Խոսրովիդխտի մտերիմ Օտայ նախարարը գնում է Աբրահամ և Վիրապում կենդանի գտնելով Ս. Գրիգորին՝ հանում, բերում է Վաղարշապատ:

Խելագարուած թագաւորը, աւագանին և ժողովրդի ահագին բազմութիւն Վաղարշապատի Արեգ դռնից դուրս գալով՝ դիմում են դէպի Աբրահամի ճանապարհը՝ ընդառաջելու Ս. Գրիգորին: Է դարում, յայտնի աւանդութեան համեմատ՝ հանդիպումն տեղի ունեցաւ այնտեղ, ուր, ըստ Սերեոսի, Է. դարում Ներսէս Գ. կաթուղիկոսը շինեց Զուարթնոց եկեղեցին, որի աւերակները այժմ յայտնի է Խանգարած եկեղեցի անունով, Ս. Էջմիածնից մօտ 5 վերստ հեռու դէպ 'ի արեւելք, Երևանի ճանապարհին մօտ:

2. Տրդատի բժշկուելը. Ս. կոյսերի բազումն. Ս. Գրիգորի ծառայութիւնը:

—

Սուրբը Գրիգոր աղօթքով և հոգևոր մխիթարութեամբ բժշկում է թագաւորին և միւս խելագա-

րուածներին։ Այս հրաշքով զօրանում է Տրդատի և իւր շրջապատողների հաւատը։ Այնուհետև Ս. Գրիգորը՝ Տրդատի գործակցութեամբ ժողովում է ս. կոյսերի մարմինները, պարուրում նրանց պատառոտուն հագուստներով և առ ժամանակ թաղում հնձանքում. սկսում է 66 օր անընդհատ քարոզել սուրբ գիրքն ու սուրբ աւետարանը, հաւատացեալներին իրանց նոր հաւատի ճշմարտութեան հետ ծանօթացնելու համար։ Նա քարոզում էր արքունի ապարանքի առաջ, քաղաքի միջավայրում։

Յ. Ս. Գէհգոռի տեսիլքը։

—

Սուրբ Գրիգորը իւր 66 օրեայ քարոզութեան ժամանակ, ոչ քուն, ոչ արթուն, մի տեսիլք տեսաւ։ Նրան երևում էր, թէ երկնքից լոյս է իջնում երկրի վերայ, լոյսի հետ էլ բազմաթիւ հրեշտակներ, որոնց առաջից՝ մի բարձրահասակ Ահաւոր մարդ, ոսկի ուռը (մուրճ) ձեռքին։ Ահաւոր մարդը ժայռը ալանում, իջնում է գետին ապարանքին մօտ քաղաքի կենդրոնում։ Մուրճով բաղխում է գետինը, որ բաւական տարածութեամբ տեղ հարթ հաւասար է դառնում. բաշխման ձայնը հասնում սանդարամետներին, որոնք հալածական են դառնում։

Այնտեղ, ուր Ահաւոր մարդը բաղխել էր գետինը, լոյս է ճառագայթում խարխափ և ճախարակաձև։ Ջևանում է մի ոսկի խարիսխ, շատ բարձր և բլուրի չափ. նրա վերայ մի հրեղէն սիւն, նրա վերայ ամպեղէն թագաղաղ (գմբէթ), նրա վերայ էլ լուսեղէն խաչ։

Երեք խարիսխներ էլ երևում են—մէկը այնտեղ, ուր նահատակուեց Ս. Հռիփսիմէն 32 ընկերներով. մէկն այնտեղ՝ ուր նահատակուեց Ս. Գայեանէն՝ 2 ընկերներով. մէկն էլ Հնձանում, ուր պատսպարուում էին սուրբ կոյսերը և ուր նահատակուեց տակաւ կոյսը։

Այս խարիսխները արիւնի պէս կարմիր էին. սիւնը՝ ամպեղէն, խոյհակները՝ հրեղէն. և երեք սիւների վերայ էլ մի մի տէրունական խաչ։ Զորս սիւների վերայ զարմանալի կամարներ կապուեցին իրար հետ։ Կամարների վերայ՝ խորանայարկ, ամպեղէն, գմբէթաձև և աստուածաշէն մի զարմանալի բան...։ Ներքևը, կամարի վերայ երևում են 37 վկաները՝ լուսաւոր և սպիտակ հանդերձով...

Այս տեսիլքը բացատրուեց սուրբ Գրիգորին այսպէս.

Հրեղէն սիւնը՝ որի խարիսխը ոսկի էր, թագաղաղը ամպեղէն, լուսեղէն խաչն էլ վերան՝ կաթուղիկէ եկեղեցին է։ Ոսկի խարիսխը՝ հաստատուն և անշարժ վէմը։ Վերայի լուսեղէն մեծ խաչը՝ քահանայապետութիւնը։ Տեղը պէտք է լինի Աստուծոյ տաճար, հաւատացեալների ապօթքի և խնդրուածի տուն ու քահանայապետութեան Աթոռ։ Երեք կարմիր խարիսխները՝ սուրբ վկաների նահատակութեան տեղերն են (Ագաթ. 270—278)։

Տեսիլքի մէջ երևեցած Ահաւոր Մարդուն համարելով՝ որ Յիսուս Քրիստոսն է, յետին ժամանակներում նրա իջած տեղը կոչուեց Իջման տեղ կամ Էջմիածին։ Ամբողջ տեսիլքը իւր գլխաւոր կէտերով մէջ բերենք, որպէս զի ընթերցողը տեսնի, թէ Ս. Էջմիածնի և Ս. կոյսերի վկայարանների կառուցման հետ ինչ նուիրական աւանդութիւն է կապուած և այն՝ ամենաուշը՝ Ե. դարից սկսուած, Ս. Էջմիածնի կառուցմանից մի դար միայն յետոյ, եթէ բանասէրների ենթադրութիւնը անպայման ուղիղ համարենք, որոնք կարծում են թէ Ե. դարում Կորիւնն է խմբագրել Ագաթանգեղոսը։

4. Վկայարանների շինուելը Ս. կոյսերի նահատակուած տեղերում։—

—

Սուրբ Գրիգորը իւր տեսիլքը պատմեց Տրդատ թագաւորին ու հաւատացեալներին՝ յորդորելով շինել ս. կոյսերի նահատակուած տեղը, նրանց գերեզմանի վերայ վկայարաններ. սուրբ Գրիգորը սուրբ կոյսերի մարմինները թաղելով նրանց նահատակուած տեղերում՝ Տրդատի հետ նրանց գերեզմանների վերայ շինեց վկայարանները, մէկը սուրբ Հռիփսիմէի և նրա հետ 32 կոյսերի նահատակուած ու թաղուած տեղը. մէկը Հնձանքում, տակար կուսի գերեզմանի վերայ, մէկն էլ սուրբ Գայեանէի և նրա հետ նահատակուած ու թաղուած 2 կոյսերի գերեզմանների վերայ։

Վկայարանների շինութեան ժամանակ, ըստ Ագաթանգեղոսի, աշխատում էին հասարակ ժողովրդի հետ Տրդատ թագաւորը, Աշխէն թագուհին և Մոսրովիդուխտը։ Վկայարանների բարեպարզութեան համար նուիրում էին, ով ինչ կարող էր։ Իսկ կաթուղիկէի տեղը սուրբ Գրիգորը որմնափակեց և մի խաչ կանգնացրեց. մի մի խաչ էլ բարձրացրեց վկայարանների վերայ, պատուիրելով նորահաւատներին՝ որ այդ խաչերին երկրպագեն։ Սուրբ կոյսերի վկայարանների շինութիւնը կատարուեց 301—302 թուին։

5. Բանասէրների կարծիքը Հայոց ապգային դարձի մասին Գ. դարում։—

—

Ա. Մ. Գարագաշեանը (Քննակ. պատմ. մասն Գ. եր. 2—3 և 315) Տրդատ մեծի կամ Գ.-ի գահ բարձրանալը դնում է 287 կամ 297 թ.։ Գէորգ Վէրէը (Ընդհ. պատմ. ռուս. թարգ. IV հատ. եր. 529) գրում է. «Տրդատ, որ տղայ ժամանակ փախել էր հռովմայեցիների մօտ, այնտեղ սովորեց զինուորական արուեստը։ Երբ նա դեռ ևս երիտասարդ էր, բայց հմուտ զօրավար, երևեց Հայոց սահմանի վերայ (286 թ.), այնտեղի նախարարները հաւաքուեցին նրա մօտ։ Պարսկաստանում ներքին պատերազմ կար երկու եղբայրների մէջ. այս նպաստեց Հայոց ազատամարտութեան յաջողութեանը. երկիրը ազատուեց պարսկական լծից և քաջն Տրդատ սկսեց վրէժխնդիր լինել պարսիկներից՝ արշաւելով դէպ 'ի

նրանց եղկիրը»։ Այս ամեն կողմով համապատասխանում է աղդային պատմիչների աւանդաձին։ Սրանով սուրբ Հռիփսիմեանց նահատակութիւնը և 15 ամեայ բանդարկութիւնից ս. Լուսաւորչի ազատուելը, Հայոց քրիստոնէութիւնը ազդովին ընդունելը գալիս է 301 թուին։ Որովհետև 286 թուին երբ Տրդատ Հայաստան էր գալիս, ըստ աղդային պատմչաց, ս. Գրիգորն էլ հետն էր, այդ ժամանակից սկսուեց նրա տանջանքն ու Արտաշատի վիրապի մէջ բանտարկութիւնը, ուր նրան մի պառաւ կին օրական մի հաց էր տալիս, թերևս Խոսրովի դխտի յանձնարարութեամբ, որ կարող էր ծածուկ քրիստոնեայ լինել, որովհետև Խորենացին (գիրք Բ. գլ. ՁԲ.) Օտայի համար, որ Խոսրովի դխտի մնուցիչն էր եղել, ասում է «զատութիւն կոյն գիտայ», իսկ Խոսրովի դխտի համար՝ «նոյնպէս և սա նորա Խոսրովի դուխտ կուսան համեստ, որպէս զօրինաւորսն, և ոչ աւելնալի ունել անդուռն բերան, նման այլ կանանց»։ Այսպիսի յատկութեամբ օժտուած էին քրիստոնեայք։ Եթէ Դիոկղետիանոսի արքունիքում նրա կինն ու դուստրը կարող էին քրիստոնեայ լինել, անհաւանական չէ, որ Խոսրովի դուխտն էլ, իր դժբաղդ տարագրութեանօրերում, Անիի մէջ, եթէ ոչ քրիստոնեայ՝ մկրտութեամբ, բայց ընտելացած լինէր քրիստոնէական ուսմունքին, նրանով մխիթարութիւն գտնելով։ Այս հաւանական է դառնում նրանով ևս, որ միայն նա է 15 տարուայ բանտարկութեան մէջ մոռացուած Գրիգորին յիշում և նրա մասին երազ տեսնում։

Տրդատի գահ բարձրանալու տարին, ինչպէս տեսանք, Գարագաշհանը դնում է 287 կամ 297 թուին, երկու թուերի մէջ տասն տարուայ տարբերութիւն կայ. եթէ ընդունենք երկրորդ թիւը, այն ժամանակ հայոց դարձը կը լինի 311 թուից յետոյ. որովհետև Տրդատի գահակալութիւնից 15 տարի յետոյ էդան ս. կոյսերի նահատակութիւնը և ս. Գրիգորի վիրապի բանտարկութիւնից ազատուելով՝ քարոզութիւնները։ Ուրիշները, օրինակ Ագէքսանդր Աննինսկի (Древніе Армянс. историки какъ Историческіе источники, Գլ. IX, § 72) Տրդատի թագաւորութիւնը դնում են 301 թուին, ս. Հռիփսիմեանց Հայաստան գալը՝ 315—316 թ. ուրեմն և Հայոց դարձը 316 թուին։ Աննինսկի այս հաշուով նոյն գլուխում ժամանակագրութեան մէջ ս. Լուսաւորչի հայրապետական գահ բարձրանալը դնում է 319 թ. իսկ պաշտօնավարութիւնը մինչև 334 թիւը։

Անշուշտ Աննիսկու աչքից վրիպել է Եւսեբիոսը, որ ասում է, թէ Հայք իրանց քրիստոնէութիւնը պաշտպանելու համար 311 թուին պատերազմեցին և յաղթեցին Մաքսիմինոսին։ Որպէս զի հնար լինէր յաղթել Հռովմէական կայսերութեան ներկայացուցչին՝ Հայք պէտք է

իրանց թագաւորի հետ տանեկան տարբերութով առաջ ընդունած լինելին քրիստոնէութիւնը։ Մինչդեռ Անտիոկոս և ուրիշների հաշուով, որոնք Տրդատի թագաւորութեանը տարին ուշացնում են, Հայոց գարձը Մաքսիմիանոսի պատերազմից յետոյ է ընկնում, որ անհնար է։ Եւսեբիոսը, որ Դ. գարի պատմիչ է, Հայոց գարձի համարեա ժամանակակից, Հայոց քրիստոնէութեան համար պատերազմելու մասին վկայելով հանդերձ, չի յիշում Հայոց ազգովին գարձը ս. Լուսաւորչի ձեռքով. թերևս համարելով այն որպէս մի իրողութիւն, որ ամէնքին արդէն յայտնի էր և որի մասին էլ պէտք չը կար գրել ու յայտնել։ Ինչպէս լինում է սովորաբար։

Տրդատի գահ բարձրանալու թէի տարակուսութեան լուծումն տալիս է Գէորգ Վէբէր (Ընդհ. պատմ. IV հատոր եր. 529—530). Նա շարունակելով պարսիկների և հռոմայեցիների պատերազմների պատմութիւնը, ասում է, որ Պարսկաստանի ներքին պատերազմները վերջ ստացան Նարսեհի յաղթութեամբ, որ տիրեց բոլոր Պարսկաստանին, այնուհետև իւր բոլոր ուժերով 297 թուին յարձակուեց Հայոց Տրդատի վերայ։ Տրդատը մենակ անկարող լինելով դիմադրել՝ փախաւ Հռոմայեցիների մօտ և մեացաւ Դիոկղետիանոսի բանակին։ Հռոմայեցիների զօրքը Գաղերիոսի զօրավարութեամբ դիշերով յարձակուեց պարսիկների վերայ, որոնք վախեցան ու փախան։ Հռոմայեցիք բացի մեծ աւարից գերեցին Նարսեհի կանանցից մի քանիսին։ Այս պատերազմը տեղի ունեցաւ 298 թուին։ Յաղթուած Նարսէհը պարտաւոր էր ընդունել Հռոմայեցիների առաջարկած պայմանները։ Խաղաղութեան դաշն կապուեց, որի մի կէտն էլ այս էր. «Ճանաչեցին Տրդատին Հայոց թագաւոր, և հիւսիսային սահմանի վերայ երկիրը, որ առաջ Հայաստանին էր պատկանում, դիջան նրան»։ Ահա այս վերահաստատութիւնն է, որ ոմանք համարում են Տրդատի գահակալութեան տարին, չը նկատելով, որ նա արդէն թագաւոր էր, որ փախաւ Նարսեհից 297 թուին, և նորից հաստատուեց իւր գահի վերայ՝ իւր աջակցութեամբ հռոմայեցիների յաղթութիւնից յետոյ, 298 թուին։

Գաւսիկ Եպիսկոպոս

(Կը շարունակուի)

Խմբագիր-հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Ա.Յ.Լ ԵՒ Ա.Յ.Լ.Ֆ

Պատերազմն եւ թղթի սպառում. *Առաջ ժամանակ Պետերբուրգի լրագիրները գործածում էին տարեկան 2 միլիոն րուբլու թուղթ։ Այժմ նոյն Պետերբուրգի լրագիրները ամսական գործածում են 280,000 րուբլու։ Եթէ այսպէս շարունակուի ամբողջ տարին, թղթի գործածութեան քանակը 70% կը բարձրանայ։ Այժմ շատ տարածուում են առհասարակ լրագիրները, իսկ հանդէսները ընդհակառակը նւազում են։ Մինչև պատերազմը Պետերբուրգի լրագիրները տպագրուում էին ընդհանուր կազմով 700 հազար օրինակ։ Այժմ այդ հանդէսները գործածում են ամսական հազար՝ 180 թերթով, այսինքն՝ 25% լինել է։ Ընդհանրապէս Պետերբուրգի մամուլը անցեալ տարի թղթի համար ծախսել է մօտաւորապէս 5 միլիոն. այժմ, եթէ գրութիւնը չը փոխուի, կարծւում է 1/2 միլիոն աւելի ծախս կունենայ։*

Եթէ պարբերական մամուլը, շնորհիւ պատերազմի, զարգացել է, թէև ի հաշիւ շաբաթաթերթերի։ Դրա փոխարէնն՝ գրքերի հրատարակութիւնը, անկասկած, չափազանց իջել է։ Գործարանատիրոջ ասելով՝ այժմ Պետերբուրգի հրատարակիչները վերցնում են ամսական առ առաւելն 100,000 րուբլու թուղթ, մինչդեռ առաջ մինչև պատերազմը, այդ հրատարակիչները ամեն ամիս 250 հազար րուբլի վճար ունէին թղթի գործարանատէրերին։

Հեռագրական վիճակագրութիւն — *Հաշւում են, որ ներկայումս հեռագրական թելերի երկայնութիւնը երկրագնդի վրայ՝ 1,256,598 կիլօմէտր է, հեռագրական կայարանների թիւը՝ 119,084, իսկ կայարաններում գտնուղ հեռագրական գործիքների թիւը՝ 241,169։ 1902 թ. տրած հեռագրերի թիւը հասել է 363,745,211։ Ստացած և տրած հեռագրերից տարին մի հոգու ընկնում է՝ Անգլիայի համար 2,27, Ֆրանսիայի՝ 1,32, Զուիցերիայի՝ 1,20, Գերմանիայի՝ 0,80 և Ռուսիայի համար 0,15։*

Ռուս-Ճապոն. պատերազմի վախճանը.—*Մի թւաբանագէտ հաշւել է, որ Ռուսաց պատերազմը Ճապոնացոց հետ կը վերջանայ 1914 թւին։ Գիտնականը իւր հաշւի հիմքը գնում Ռուսաց՝ Նապոլիոնի արշաւանքի ժամանակ մղած բոլոր պատերազմների տեւողութիւնը։ Այս պատերազմը վերջացաւ և խաղաղութեան դաշինքը հաստատուեց 1815 թ.։ Եթէ վերցնենք այս թւանշանները, ամեն մինը, և գրենք իրար տակ և գումարենք 1815 թ. հետ, կը ստանանք տարեթիւը յոյսերդ պատերազմի, որ ունեցաւ Ռուսաստանը։ Այսպէս՝*

1815 թ.	
1	
8	
1	
5	*գումար*

1830 թ.	*Լեհացոց յուզումները զսպուեցաւ.*
1	
8	
3	
0	

1842 թ.	*Կովկասեան պատերազմը վերջացաւ.*
1	
8	
4	
2	

1878 թ.	*Ռուս. Թրքական պատերազմը վերջացաւ.*
1	
8	
7	
8	

1902 թ.	*Չինական ապստամբութիւնից յետոյ ռուսաց զօրքը կանչուեցաւ։*
1	
9	
9	
2	

1914 թ.	*Ռուս-Ճապոն. պատերազմի վերջը։*

XXII s. # ԱՂԲԻՒՐ

Շարունակւում է ևերկայ **1904** *թ.*

XXII s. *բաժանորդագրութիւնը* **ԱՂԲԻՒՐ**

Ամսագրի և ՏԱՐԱԶ *պատկերազարդ շաբաթաթերթի, որոնք հրատարակւում են ճոխ և ընդարձակ ծրագրով ու ծաւալով։*

ԱՂԲԻՒՐԻՆ և ՏԱՐԱԶԻՆ *աշխատակցում են մեր գրական ամենաընտիր ոյժերը։*

ՊՐԻՄԻԱՆԵՐԸ, որ տրւում են այժմեանից՝ 1) **Ս. ՍԱՀԱԿ,** 2) **Ս. ՄԵՍՐՈՊ,** 3) **ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ,** և 4) *էլեկտրօ-ֆիզիանկաբ,* **ՉՆԱՇԽԱՐՀԻԿ։**

Յայտարարութիւններ **ԱՂԲԻՒՐԻ** *կազմի վրայ՝* 1/2 *էջի տողը 50 կ.։ Ամբողջ երեսը 50 ր., 1/2 եր. 30 ր. իւրաքանչիւր անգամ։* Տարազում՝ 1/5 *վերջին երեսի տողը՝ 25 կ., առաջին երեսում 40 կ.,* արտասահմանից կրկնակի։

ԱՂԲԻՒՐԻ *տարեկան բաժանորդագինը՝* **3** ր. (արտասահման *5* ր.) **ՏԱՐԱԶ 6** ր. *(արտասահմ. 10* ր.) *Աղբիւր-Տարազ միւռնոյն հասցեով—***10** ր. *(արտասահման 18 րուբլի կամ 50 ֆր.)։*

Պրեմիաներ, յատկացածներ, ստանում են միմիայն Աղբիւր Տարազ միւռնոյն հասցեով ստորագրողները։

Ազատիկ կամ մաս-մաս վճարող բաժանորդներ չեն ընդունւում։

Թիֆլիսում բացի խմբագրատանից (Օլգինսկայա 33), կարելի է ստորագրել Կենդրոնական և Դուստեֆբերգ գրաւաճառանոցներում։ Բագւում Մ. Ա. Սունդուկեանի «Сотрудникъ» լրագրաւաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція АГБЮРЪ *կամ* ТАРАЗЪ.
Tiflis, *(Caucase)* Rédaction ACBUR *կամ* TARAZ.

XV s. # ՏԱՐԱԶ XV s.